Azg
22 ՅՈՒՆԻՍ 1996. ՇԱԲԱԹ. # 115 (1121)

Մոսկվա. Գլխավոր դատախազը սկսեց հետաքննությունը

21 ՀՈՒՆԻՍ, BBC. Ռուսաստանի գլխավոր դատախազը հայտնեց, որ հետաքննություն է սկսվել նախագահի անվտանգության գծով նոր խորհրդական Ալեքսանդր Լեբեդի կողմից առաջ քաշված մեղադրանքների կապակցությամբ: Ավելի վաղ Լեբեդը հայտարարել էր, թե Ռուսաստանի նախկին պաշտպանության նախարարն ու մի խումբ գեներալների հեղաշրջման նախապատրաստությամբ են զբաղված, որպեսզի կանխեն Գրաչովի պաշտոնաթողությունը եւ այդ նպատակին հասնելու համար փորձել են զինուժ օգտագործել: Բացի այդ, ինչպես հայտնեց գլխավոր դատախազ Սկուրատովը, հետաքննություն է սկսվել նաեւ յոռեբաբթի երեկոյան Սոֆիսկայ տան ելքի մոտ Բորիս Ելցինի նախագահական ընտրարավի 2 կազմակերպիչների՝ Արկադի Եվստաֆեւի եւ Սերգեյ Լիսովսկու հայանավորման կապակցությամբ: BBC-ի Մոսկվայի թղթակիցը հայտնեց, որ այդ հետաքննությունները ըստ երեւույթին Բորիս Ելցինի, այլ ոչ թե Ալեքսանդր Լեբեդի նախաձեռնությամբ են սկսվել: Գեներալը հրաժարվել է մեկնաբանություններ տալ:

ՍՈՒՐԻԱ

Գեներալ Լեբեդը շարունակելու է կադրային փոփոխությունները

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Ինչպես հայտնի է, Ալեքսանդր Լեբեդը հայտարարել էր, թե երեքշաբթի օրը մի գաղտնի խորհրդակցություն է տեղի ունեցել, որից հետո դավադրության մասնակիցները, որոնց նա ԳԿՀՊ 3 է անվանել, հրաման են արձակել Մոսկվայում տեղակայված զորքերը մարտական լրիվ պատրաստության բերել: Գեներալի խոսքերով, իր անձնական միջամտության շնորհիվ է միայն հնարավոր դարձել կանխել տիրզական իրադարձությունները: Սակայն Պետդումայի մի շարք պատգամավորներ, ինչպես նաեւ Գենադի Զյուգանովը, կասկած էին հայտնել Լեբեդի հայտարարության ճշմարտացիության կապակցությամբ: Դումայի պաշտպանության կոմիտեի նախագահ Միխայիլ Սուսլովը հայտնեց, որ ասուլման ադյուտանտում պատգամավորները «ոչ Գրաչովի եւ ոչ էլ գլխավոր շտաբի կողմից հեղաշրջում կատարելու ոչ մի փորձ ու ցանկություն չեն հայտնաբերել»: Բացի այդ, մեկնաբաններն ուշադրություն են հրավիրում այն փաստի վրա, որ Ալեքսանդր Լեբեդը ունեցել էր նախկին ղեկի հանդեպ: Պետդումայի պատգամավորները հուսով են, որ Միխայիլ Կոլեսնիկովը, որն այժմ պաշտպանության նախարարի պարտականությունները է կատարում, ցանկություն չի խնայի, որ պարզի, թե ինչ է այնուամենայնիվ տեղի ունեցել ու կանգնեցնի իրենց այդ մասին: Ուրբաթ օրը Ռուսաստանի Անվտանգության խորհրդի նոր քարտուղարն իր առաջին ելույթն ունեցավ Պետդումայում: Ալեքսանդր Լեբեդն ասաց, որ կադրային փոփոխություններ կշարունակվեն եւ, մասնավորապես, իր երեք տեղակալներից մեկը միայն կոչահրաման պատանը Մանիլովը: Մյուսներ պատասխանատու կարվեն: Կադրային փոփոխություններ կլինեն նաեւ պաշտպանության նախարարությունում եւ մյուս շաբաթվա ընթացքում կնշանակվի պաշտպանության նոր նախարար: Լեբեդը հայտնեց նաեւ, որ ԳԿՀՊ 3-ի ենթակայությունը դասական հետաքրքիր չունի, այսինքն՝ նշեց, որ դասական հետաքրքրություններ չեն լինելու: Մինչ այդ, նրա օգնական Վլադիմիր Տիտովը հայտնել էր Լեբեդի խոսքը, թե հերթական անգամ լուսաբանողներ «լվից ազատ են չինել»:

«Յաբլոկո՞ն» էլ Ելցինի կողմը

21 ՀՈՒՆԻՍ, «ԱՇՏՈՒՅՈՒՆ»: Գրիգորի Յավլինսկին ողջունեց Կորժակովի, Բարսուկովի եւ Սոսկովեցի պաշտոնանկ անելը եւ վստահություն հայտնեց, որ «Յաբլոկո»-ն շարժման համագումարում որոշում կընդունվի ընտրությունների երկրորդ փուլում պաշտպանել Բորիս Ելցինի թեկնածությունը նախագահի պաշտոնին: CNN հեռուստաալիքին տրված հարցազրույցում Յավլինսկին նշեց, որ հենց ինքն է ընդգծել որոշ ընտրությունների ընթացքում Ռուսաստանի նախագահին աջակցելու նախապայման, որ այդ մարդիկ պաշտոնանկ արվեն: Յավլինսկու խոսքերով դեռ ոչ բոլոր կոռումպացված ուժերն են կրեմլից հեռացվել եւ այժմ ամեն ինչ կախված է այն բանից, թե էլի ինչ փոփոխություններ կարվեն:

Բարսուկովի պաշտոնում առայժմ Կովալյովը

ՍՈՍԿՎԱ, 21 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը իր հրամանագրով Ռուսաստանի Անվտանգության հանձնաժողովի ծառայության տնօրենի պաշտոնակատար է նշանակել Նիկոլայ Կովալյովին: Նախկինում նա զբաղեցնում էր Անվտանգության հանձնաժողովի ծառայության փոխտնօրենի պաշտոնը: Որոշես փոխտնօրեն նա տնօրինել է տնտեսական հակահետախուզության հարցերը: Ավելի վաղ Նիկոլայ Կովալյովը աշխատել է Անվտանգության հանձնաժողովի ծառայության Մոսկվայի եւ Մոսկովյան մարզի վարչությունում:

Չեչնիայում ռուսները զոհեր են տալիս

21 ՀՈՒՆԻՍ, BBC. Չեչնիայից եկած հաղորդագրությունների համաձայն, ականներից ռուսաստանյան 2 ինքնաձիգենների պայթելու հետեւանքով Գրոզնում սպանվել են 5 եւ վիրավորվել 5 ռուսաստանյան զինծառայողներ: Ավելի վաղ հանձնաժողովի հարավ-արեւելքում գտնվող Ցենտորոյ գյուղից ոչ հեռու, չեչեն անջատողականները ռուսաստանյան մի ուղղաթիռ են խփել, որի հետեւանքով զոհվել է 1 եւ վիրավորվել 7 մարդ:

ՍՈՍԿՎԱ

Զորի Բալայանը պատասխանում է Գենադի Սելեզնյովին

Հանդարտակախոս ու գրոլ Զորի Բալայանը դիմել է նամակով «Մայր» միջոցեսական հեռուստառադիոընկերության ղեկավարությանը կազմված Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի նախագահ Գենադի Սելեզնյովի հայտարարությունը հրաժարակված այդ ընկերության ծրագրերից մեկում: Բալայանը տեղեկացրեց մեզ հեռախոսով Մոսկվայից, տրամադրելով իր ուղերձի տեքստը:

«Բանվում, ելույթ ունենալով մամուլի առաջիկում, Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովը հիշատակել է իմ անունը, հայտարարելով, որ ես ձգտել եմ ընդունելության իր մոտ, տակավին մնալով, քանի որ հայտնի եմ նրան որպես դատարանի շարժման հրահրող». գրում է Զորի Բալայանը: «Մի կողմ թող սասանի նախագահ Բորիս Ելցինը իր հրամանագրով Ռուսաստանի Անվտանգության հանձաժողովի ծառայության տնօրենի պաշտոնակատար է նշանակել Նիկոլայ Կովալյովին: Նախկինում նա զբաղեցնում էր Անվտանգության հանձաժողովի փոխտնօրենի պաշտոնը: Որոշես փոխտնօրեն նա տնօրինել է տնտեսական հակահետախուզության հարցերը: Ավելի վաղ Նիկոլայ Կովալյովը աշխատել է Անվտանգության հանձաժողովի եւ Մոսկովյան մարզի վարչությունում:

Գենադի Սելեզնյովին վերջին անգամ տեսել եմ 8 տարի առաջ, ԱՄՆ-ում, հանդիպելով ժամանակ, հայտնում է Զորի Բալայանը: Նրը նրան ընտրելին Դումայի խոսնակ, հիշելով մեր մասնագիտական նախկին հարաբերությունները, նա զանգահարելի Մոսկվա, որպեսզի տեղեկանան նրան: Բարեւարտիին ասաց, որ ուշադրություն նրանի տերը խնդրում է կրկին հիշեցնել խորհրդարանական ավարտին: Սակայն այդպես ինձ չհաջողվեց տեղեկանալ նախկին գործընկերոջս, գրում է Զորի Բալայանը: Չեմ կարծում, եզրակացնում է գրողը, որ դա կարելի է համարել իրեն «ձգտում ընդունելության իր մոտ»: Մի բան ինձ զարմացրեց. ինչի՞ համար էր ՌԴ Պետդումայի խոսնակին զանգահարելու մասին տարածվեցավ մամուլում: Ինչպես հայտնի է, որ հենց սուտն է պարտադիր հայ հանդիսատեսի սպառման համար», նշում է Զորի Բալայանը:

ՏԻԳՐԱՆ ԵՊՈՍՅԱՆ

Բրիտանիայի եւ Եվրամիության հակամարտությանը վերջ

ԲԵԼՖԱՍՏ, 21 ՀՈՒՆԻՍ, ՆՏ AFP. Մեծ Բրիտանիան դադարեցրել է Եվրամիության հետ շահագրգռվածությունը հաղթահարելու հարցերը, որը կապված էր Եվրամիության մյուս 14 երկրների կողմից բրիտանական տավարի մսի ուսումնասիրման հետ: Ոչնչացարել են բրիտանական նախարարները: «Շահագրգռվածության մեր հաղթահարությունը այս պահից դադարեցվում է», ասել է արտաքին գործոց նախարար Մայքլ Հոգգը Բելֆաստում գտնվող Եվրամիության գագաթաժողովում:

Ռիֆքինդը ասել է, որ վարչապետ Ջոն Մեյջորը երկու նշանակալի զիջումներ է հասել Եվրամիության մյուս անդամներից: Յոթերեցիայի գագաթաժողովում մի կարեւոր բարելավման Եվրահանձնաժողովը ոչ անգամ երկրների հետ հարաբերությունների արգելման մեկնաբանման մասին եւ երաշխիք, որ տավարի մսի արտահանման արգելման այս կամ այն մասին վերացման մասին որոշումներ հիմնված կլինեն գիտական եւ ոչ թե քաղաքական հիմքի վրա:

Անցած մեկ ամսվա ընթացքում Բրիտանիայի վերջի դատաստանով խափանվել է Եվրամիության մոտ 100 որոշումների ընդունում: Դեռ դատաստանը «զիջ կոմերի» հիմնադրությամբ դատաստանով բրիտանական տավարի մսի վրա դրված արգելքն էր: Այն արգելքը հայ առ հայ կիսանալ:

«ՊԱՌԱՎԱՔԱՐ»

«Կար-չկար մի պառավ, որը քարը ձե՞ռն առավ»

Պառավքար: «Լուսերի» մեկնաբանությամբ «կար չկար մի պառավ, որը քարի ձեռն առավ»: Այս մակաբերների գնահատականով ոչ ոքական սահմանիկությունն, Պառայր Հայրիկյանի նախընտրական արշավի ձախողման բարձրակետ, մեկն այն դատաստաններից, որ սիմբոլական նեղին սկսելեցին սպա ցույց կազմակերպել նախագահի երդման արարողության օրը: Պահանջվեց մոտ 5 տարի, որպեսզի Պառավքարի տարահանման «ապրը» տեղից շարժվի այդ հարց է, թե դեռի որ: Ավելի քան հարեւանակի հոլովվող «Պառավքարը», որ բոլոր Պառայր Պայրիկյանի հայրի լսելում է Հրազդանի երգեցիկ ժողովրդական, նեղ կայացված է որոնց բրեական գործ այստեղ սասած «անհայտ անձանց կողմից կատարված չարամիտ գործողություն»: Նախընտրական արշավի ներքեւի դարը Պառավքարում ի դեպ, ԱԺ-ի ԱԺՄ-ի դատաստանական խմբի անդամ Ա. Բարսեղ Զաքարյանի հայրենիքում ավելացնելու մեկնած ամենական մի եւ նրանց Յ1 իմնաբարձրի դարի մանեանից 4 ամբարտավանները մեղադրվում են բրեական օրենսգրքի 222 դ այսինքն խուլիգանական գործողությունների համար նախատեսված հոդվածով: Մինչդեռ, բոլոր Հայրիկյանի, խմբի զանգվածային անկարգությունների մասին է, որին մասնակցել են հարյուրավոր մարդիկ: Մի քանի տարբ ընթացող դատավարության ընթացքում դատարանը լսել է վկաների ցուցմունքներ, ամբաստանյալների բացատրություններ: Երեկ ընթերցվեցին դատարան չներկայացած վկաների գրավոր ցուցմունքները: Նիստը, որ սկսվեց նույնիսկ հայկական «ճշտադատությունն» համար աննեղեի, գրեթե 4 ժամ ուշացումով, հետաձգվեց երկուշաբթի օրվան: Այն անցավ աշխույժ, «փոխոխոնման» մթնոլորտում, որ սեսդատելիորեն ոգեշնչեց լրագրական ձայնագրիչի հետ կատարված հետաքրքրաշարժ միջադեպով, որ սպառնում էր վերածել նոր Պառավքարիների, սակայն այդ եւ դատավարիների, սակայն մանրամասների մասին մեր հաջորդ, հուսով եմ, վերջին «ռեպորտաժում»:

Լ.Պ.

ՄԱՐՍԵԼ

Վերջացավ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի այցելությունը Շվեյցարիա եւ Փարիզ

ԵՐԵՎԱՆ, 21 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունիսի 21-ին Շվեյցարիա եւ Փարիզ կատարած երկշաբաթյա այցելությունից հետո Մայր Աթոռ Ս.Էջմիածին է վերադարձել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը Շվեյցարիա էր մեկնել Շվեյցարիայի բողոքական եկեղեցիների միջոցությամբ կազմակերպության (EPER) հրավերով՝ կազմակերպության հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ:

Ինչպես տեղեկացնում են Մայր Աթոռի Մամլո Դիվանից, Վեհափառ Հայրապետը այցելել է Ժնեւ, Լոզան եւ Ցյուրիխ քաղաքներ, մասնակցել այնտեղ կազմակերպված հանդիսություններին: Այցելության ընթացքում Նորին Սրբությունը հանդես է եկել տեղի ռադիոյով եւ հեռուստատեսությամբ, հանդիպել է մամուլի ներկայացուցիչների հետ:

EPER-ի ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են Բողոքական եկեղեցիների միջոցության կազմակերպության եւ Մայր Աթոռի միջեւ ներկա հարաբերություններին առնչվող հարցեր:

Այնուհետեւ Նորին Սրբությունն Գարեգին Ա կաթողիկոսը հանդիպել է ժնեւի հայ համայնքի հետ, քաղաքի Ս.Հակոբ եկեղեցում մատուցել է Ս.Պատարագ, հանդես է եկել քարոզով:

Հայ համայնքին այցելություն տալուց հետո, Վեհափառ Հայրապետը ուսումնական դիտարկ է եղել եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկ. Կոնրադ Ռայզերի եւ Եվրոպայի եկեղեցիների համագումարի ընդհանուր քարտուղար դոկ. Ժան Ֆիշերի, որոնց հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են հիշյալ երկու կազմակերպություններին Մայր Աթոռի մասնակցությունը էլ ավելի գործուն դարձնելու եւ այլ հարցեր:

Վեհափառ Հայրապետի հաջորդ այցելությունը եղել է Միջազգային կարմիր խաչի կազմակերպություն: Ջերմ ընդունելությունից հետո Նորին Սրբությունն Գարեգին Ա կաթողիկոսը շնորհակալություն է հայտնել Հայաստանում ավելացած մարդասիրական օգնության համար, մասնավորապես գերիների փոխանակման հարցում:

Փարիզում Նորին Սրբությունը նախագահել է Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված գիտական համաժողովին: Գիտաժողովը տեւել է 2 օր: Ֆրանսիայից, Միացյալ Նահանգներից, Անգլիայից, Իտալիայից, Գերմանիայից, Ավստրիայից, Լիբանանից ժամանած օտար եւ հայ գիտնականների մասնակցությունը մեկ անգամ եւս վկայում էր, թե որքան բարձր են գնահատվում Հայ եկեղեցու 1700 տարիների մատուցած ծառայությունները համաշխարհային առումով:

Կիրակի օրը Փարիզի հայկական եկեղեցում Վեհափառ Հայրապետի կողմից մատուցվել է Ս.Պատարագ, որին մասնակցում էին նաեւ գիտաժողովի մասնակիցները, պաշտոնական անձինք:

Գարեգին Ա կաթողիկոսի վերջին այցելությունը եղել է Նանթ քաղաք, ուր Նորին Սրբությունը հանդիպել է տեղի իշխանությունների եւ Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդի հետ: Նանտում Վեհափառ Հայրապետը այցելել է նաեւ Դերբեի բանգարան, ուր մի քանի ամիս առաջ բացվել եւ մինչեւ սեպտեմբեր ամիսը գործելու է հայ քաղաքակրթությանը նվիրված ցուցահանդեսը:

Այցելության ընթացքում Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Առամ Ա կաթողիկոսը:

ԱԶԳ

ՊՄԲԱԳԻՐ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Բեյրութից աջակցում են ՌԱԿ նախորդ Կենտրոնական վարչությանը

Նույնիսկ Բեյրութից, որտեղ գործում է ՌԱԿ Բեյրության խմբակը, ստացել ենք մի խումբ ռամկավարների երջաբերականը (թիվ 1), որը հրապարակում ենք ստորեւ, զանց առնելով ավելորդ ածականներն ու էպիտետները: Այսպիսով, Մ.Նահանգների Արեւելյան երջանից ու Կանադայից, ինչպես նաեւ Մեծ Բրիտանիայից եւ այլ երջանակներից հետո, Լիբանանի մայրաքաղաքում գործող մի խումբ ռամկավարներ բողոք են բարձրացրել Բեյրության խմբակի գործունեության դեմ եւ զորակցություն հայտնել ՌԱԿ 18-րդ պատգամավորական ժողովում ընտրված վարչությանը (Արավիր Գյոնջյան, Հայկաշեն Ուզունյան, Երվանդ Ազատյան, Ռուբեն Թերզյան, դոկտ. Հարություն Արզումանյան եւ Վարդան Ուզունյան):

Այլեւս գաղտնիք չէ, որ ՌԱԿ-ը կ'ապրի իր պատմության տխուր էջերը: Թուրքերին, Չոպանեաններու եւ Տամատեաններու հիմնած կուսակցությունը կը գտնուի անդունդի եզրին: Ամէն ինչ սկսաւ, երբ խումբ մը փառասէր ակածախնդիրներ, ճարպկությամբ եւ զանազան խոստումներ բաշխելով կուսակցութեան 19դ Ընդհ. Պատգամաւորական ժողովին ապրդեցան ղեկավարական շարքեր:

Արդարեւ, Բեյրութ հաստատուած նոր կեդրոնական վարչութիւնը յուսալի իր ապիկար եւ իսկական երեսը ցոյց տալ դառնալով այլամերժ, նաեւ սուր ծօծելով աջ ու ահեակ:

Չուրացաւ կուսակցութեանս երեց ղեկավար ընկերներուն «Զգաստութեան կոչը»,որ կը պահանջէր նորակազմ Կեդրոնական վարչութեան երիտասարդ ընկերներէն ըլլալ զուսդ եւ հաւասարակշռուած, երջաբերականներով եւ սալոնային ասէկոսներով չոյզտրել կուսակցութեան տասնամեակներու սերս բարեկամութիւնը Հայկական բարեգործական ընդհանուր միութեան եւ անոր արժանաւոր ղեկավարութեան դէմ սանձազերծելով աղտոտ պայքար:

Դժբախտաբար, «Զգաստութեան կոչն» ալ չօգնեց:

Այս անփառունակ վիճակին ի տես, նորակազմ Կեդրոնական վարչութեան մաս կազմած երկու յարգուած ընկերներ Ռուբէն Թերզեան, Երուանդ Ազատեան եւ էդի Աղամեան, հրաժարեցան վարչութենէն:

Այս ալ չօգնեց, մնացեալ «ղեկավարները», որոնք արդէն իսկ կը գործէին ինքնագլուխ, առանց խորհրդակցելու Ամերիկա գտնուող վերոյիշեալ երկու իրենց պաշտօնակիցներուն հետ, շարունակեցին իրենց կործանարար գործունէութիւնը: Շին կախակայումներ, ազդարարագրեր եւ վճարումներ: Կուսակցական շարքերէն դուրս դրուած յայտարարելով այնպիսի յարգելի ընկերներ, որոնք անհատական բն կուսակցական արժանիներով շատ աւելի կը կշռէին, քան մնացեալ «ղեկավարները» միասին:

Շարունակուեցան ակածախնդիր եւ փառասիրական գործունէութիւնները: Շատ մը երջանակներու եւ անհատ ընկերներու ջանքերով լոյս տեսնող «Զարթօնք» օրաթերթը, որ Սփիւռքի մէջ ունի իր յատուկ դիրքը, սկսաւ լոյս տեսնել միայն մեծարեալ «ղեկավարներուն» փառասիրութիւնը գոհացնելու նպատակաւ: Բազում անհատական եւ խմբային լուսանկարներ, բառարան բուրդ տիպոսներ եւ նման խեղկատակութիւններ:

Այս խայտառակութիւններով, իրենք զիրենք կուսակցութեան գերագոյն մարմին յորջորջողները արժանաբար վերածուեցան «Բեյրութի խմբակի»:

Սկսաւ երջանակներ պառակտելու գործը, ինչպես է օրինակը Արեւելեան Ամերիկայի եւ Կանադայի պարագային, որ սակայն անշուշտ ծախողեցաւ:

Սկսան մսխուիլ նաեւ կուսակցութեան թէլէեան կեդրոնի եւ Վարժարանի նիւթական սուղ միջոցները, երջաղտոյներ կազմակերպուելով դէպի Յունաստան, Եգիպտոս, Յորդանան, հոն եւս պառակտումներ սերմանելու, ինչպես նաեւ Հայաստան ուր ցանկացան չխնայուեցաւ պառակտելու եւ [illegible]բեկելու ՀՌԱԿ-ը:

19դ Ընդհ. պատգամաւորական ժողովն եւս, երբ Կեդրոնական վարչութեան անդամներուն մեծամասնութեան Սիրին Արեւելք հաստատուած ըլլալուն պատճառով Կեդրոնը Բեյրութ փոխադրուեցաւ, շատերու դարխութիւնը եւ Բեյրութը հզօր երջանակ տեսնելու յոյսերը շուտով ի դերեւ ելան: Բեյրութ հաստատուած Կեդրոնը փոխանակ կուսակցութեան ներքին կառոյցը ամրապնդելու, սկսաւ «բարձր խաղաքաղաքականութիւն» խաղալ, դառնալով խաղալիքը եւ ծիծաղի առարկան այլ կազմակերպութիւններու:

«Բեյրութի խմբակը» եւ իր կամակատար եւ դրածոյ Լիբանանի «ղեկավարները», անփորձ եւ պատեհապաշտ անձեր, իրենց տեսակէտները կը պարտադրեն նաեւ միւս փորձառու եւ յարգուած կուսակցանուէր անդամներուն: Այս պատճառով Լիբանանի երջանակի ղեկավարներուն մէջ կան հրաժարողներ եւ լուսախնդիրներ, որոնք յանկարծ յանուանէ կը դժգոհին, թէ կուսակցութեան Լիբանանի ղեկավարութիւնը որեւէ տիպի եւ արդիական ախտանշով չէ զբաղած:

Ակումբները կը պարզեն խղճալի վիճակ: Անոնց անդամական ժողովները կը զումարուին մնացի վրայ հաւուող անդամներով: Լիբանանի ամբողջ երջանակի ընդհանուր անդամական ժողովներուն, որ վերջերս կազմակերպուեցան, ուր «Բեյրութի խմբակը» պիտի «սպասէ» բացատրութիւններ տար կուսակցութեան ներկայ իրավիճակին եւ հայրենիքի մէջ կուսակցութեանս իրագործումներուն մասին, հաւաքուեցաւ միայն քանի մը տասնեակ հոգի:

Հետագային կատարուեցաւ անտեղեակ մեր «առաջնորդները» սկսան զբաղիլ նաեւ «ածպարարութեամբ»: Հայրենիք երթալով, իրենք զիրենք հայրենի պետականութեան հաւատարիմ ծեւացնելով (կարծես ՌԱԿի այս ուանդական ուղեգիծը իրենք գծած ըլլային), սնորագրութիւն կեղծելով, կուսակցական թղթածարներ դաւաճանաբար բացայայտելով, կաշառքներ բաժնելով, փորձեցին Հայաստանի մէջ «Ազգ» օրաթերթը իւրացնել եւ պատի մը կարծելով, որ յաջողած են իրենց ածպարարական նոր ասպարէզին մէջ, վազելով եկան Բեյրութ... Եվ անշուշտ, բոլորին յիշողութեան մէջ տակաւին թարմ է եղած «յաղթութենէն» գինովցած ելոյթները, ընտրական եւ փառաբանական յօդուածները, բարի վերադարձի մաղթանքները, կեղծ ու պարտադրուած կոչերն ու հեռագրերը: Անշուշտ չուրացաւ արդարութիւնը եւ «Ազգ»ին «գրաւումին» հետեւանքը տակաւին լիովին չլմբոշխնած խմբակը դառն յուսախաբութիւն ապրեցաւ, տեսնելով թերթին վերադարձը իր օրինական սեփականատիրոջ եւ ակնկնեներուն:

Այս բոլորին ի տես կարելի չէր աւելի սպասել: Մանաւանդ որ չխնայուեցաւ ոչ միջնորդութիւն եւ ոչ ալ խրատ: Արդէն իսկ կուսակցութիւնը այս վիճակէն դուրս բերելու առաջին հիմնական եւ փրկարար քայլը առնուած է՝ 18դ Ընդհ. պատգամաւորական ժողովէն բխած նախկին կեդրոնական վարչութիւնը վերականգնուած է եւ վերստանձնած իր պարտականութիւնները:

Ինչպես ուրիշ երջանակներ իրենց հաւատարմութիւնը յայտնած են վերոյիշեալ մարմինին, նոյնպէս եւ Լիբանանի մէջ գիտակից ընկերներու համախումբը, որ սկսած է սնուտանալ, շուտով պիտի սանձնէ փրկարար աշխատանքին մէջ իր պարտականութիւնը՝ դուրս բերելու համար մեր սիրելի կուսակցութիւնը ներկայ իր անփառունակ վիճակէն:

Լաւատես ենք ու վստահ,որ շուտով ՌԱԿը կը վերստանձնէ իր նախկին պատուաբեր դերը Սփիւռքի մէջ, աւելի լաւ ծառայելու եւ թիկունք կանգնելու մեր սիրելի Հայրենիքին եւ անոր պետականութեան:

ՌԱԿ 18ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՆ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Բեյրութ, 12 Յունիս 1996

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վարդգես Գնունին չի ուզում ակադեմիկոսների ընդդիմախոսը լինել, բայց...

Ինչքան էլ գիտության եւ կրթության նախարար Վարդգես Գնունին երեկ հրավիրված ասուլիսում փորձեց լրագրողներին համոզել, թե այդ հանդիպումը որեւէ կապ չունի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսների հայտարարության հետ եւ ինքը չի պատրաստվում պատասխանել դրան, այնուամենայնիվ, առաջիկա ողջ ընթացքում կամա թե ակամա շոշափվեց այդ դիմում-հայտարարությունը: Ու թեեւ նախարարն ասաց, թե ինքը որեւէ մեկնաբանություն չի տա, բայց խոսքի մեջ եղան գնահատականներ, որոնք քաջ էության պատասխան էին: Նախ, Վարդգես Գնունին շեշտվեց կոլեկտիվ դիմում-բողոքների ավանդույթին, հետո նշեց, որ դրանցում խնդրի լուծումներ չեն առաջարկվում: «Ես չեմ ուզում դիմումի ընդդիմախոս դառնալ», հայտարարեց նա եւ զարմանք հայտնեց, որ դիմումը ստորագրողների թվում են նաեւ հանրապետությունից դուրս գտնվող գիտնականներ: Իհարկե, նախարարը փորձեց պատասխանել լրագրողների բոլոր այն սուր հարցերին, որոնք վերաբերում էին գիտական թեմաների ընտրությանը, ֆինանսավորմանը եւ գիտաշխատողների կրճատմանը: Նրա ասելով, այդ թեմաների ընտրությունը կատարվել է վարչատեսչին առընթեր փորձագետների հանձնաժողովի կողմից, որոնք հենվել են ինստիտուտի գիտխորհրդի որոշումների վրա: Միաժամանակ, քաջ նախարարի, յուրաքանչյուր գիտական կամ գիտականների խումբ կարող են ինքնուրույն ներկայացնել իրենց թեմաները: Վարդգես Գնունին նշեց, թե անցած տարվա համեմատ 50 տոկոսով ավելացվել է գիտության ֆինանսավորումը: Երբ 1995-ին գիտությանը տրվել է 1 մլրդ 194 մլն 860 հազար դրամ, առյա 1996-ին՝ 1 մլրդ 802 մլն 480 հազար: Ընդհանրապես նախարարն այն կարծիքին էր, թե այն գիտահետազոտական հիմնարկները, որոնց տնօրենները ակտիվ աշխատում են, հասնում են որոշակի հաջողությունների, իսկ նրանք, ովքեր ձեռքները ծալած նստում են, հայտնվում են տխուր վիճակում: Իսկ այն գիտաշխատողները, որոնք կրճատվում են, դրն Գնունին նրանց հրավիրում է արդյունաբերության ոլորտում աշխատելու եւ այն տեղ կիրառելու խենց գիտական բնմաները: Մինչդեռ, նրա ասելով, աշխատանքի տեղավորելու հարցով ի Ինն ոչ մի գիտաշխատող չի դիմել: Ի դեղ, նախարարը ավելի առաջ անցավ եւ գիտության անզորձ բնկնածներին հրավիրեց աշխատելու դպրոցներում, որ բավական բաց տեղեր կան: Լրագրողներից մեկը նրանից բացակայնեց, թե աշակերտներ վճարում են:

Նախարարը չմոռացավ նշել նաեւ, թե ինչ է արել նախարարությունը գիտականների համար: Մոտ 5000 հոգի, այդ թվում ուսանողներ ու հայցվողներ գործադրել են արտասահման, իսկ շատերը 4085 հոգի, ստացել են միջազգային գիտական շնորհներ:

ՏԱԿՈԲ ԱՍԱՏՐԱՆ

Հ.Յ.Դ. Ֆրանսայի Կեդրոնական կոմիտեին հանդիպումը զոյգ Հայրապետներուն հետ

Օգտուելով Հայաստանեայց եկեղեցւոյ հիմնարարեան 1700ամեակի նշման Գործադիր մարմնի ժողովին համար Ամենայն Հայոց Գարեգին Ա. կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի Փարիզ գտնուելու պատեհ առիթէն, Հ.Յ.Դաշնակցութեան Ֆրանսայի Կեդր. կոմիտէն պատուիրակութիւն մը, բաղկացած Յակոբ Ենիկոմշեանէ, Տիգրան Շիրվանեանէ, Հայկ Թոքմանեանէ եւ Հայ դատի յանձնախումբի ներկայացուցիչ Արա Գրիգորեանէ, շաբաթաբրի, 19 Յունիս 1996ի երեկոյեան ընդունուեցաւ յաջորդաբար երկու Վեհափառ Հայրապետներուն կողմէ: Իրարանչիւր մօտ մէկուկէս ժամ տեւած այս զոյգ հանդիպումներուն ընթացքին, զրոյցի ջերմ մթնոլորտի մէջ, Վեհափառ Հայրապետներուն հետ օգտագործուեցան յատկապես Ֆրանսայի հայ համայնքի ու ընդհանրապէս Սփիւռքի ու հայրենեաց վերաբերող հարցեր:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Քննարկում է «Գերագույն խորհուրդը»

Ինչպես տեղեկացրել էինք, երեկ կայացավ «Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբի «Սեփականաշնորհում. մեկնաբանություններ սեղան» հանդիպումը: «Ազգը» տպագրել էր նաեւ ակումբի սոցիոլոգիական կենտրոնի կատարած հետազոտությունների տվյալների մի մասը: Ինչպես պարզվեց, նրանց տրամադրած «Հայաստանի» եղած տպագրական վրիպակի պատճառով սեփականաշնորհման գործընթացը հարցվողների 60 տոկոսը գնահատել են անարդար (սպրդել էր ժխտական նախածանցը): Կլոր սեղանին հրավիրված կառավարության կուսակցությունների ներկայացուցիչները, տնտեսագետները հանդիպումն անհրաժեշտ, անգամ ուշացած որակեցին եւ համաձայնեցին հետագայում համախակի հանդիպելու, առաջարկություններով հանդես գալու մասին: Սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար Անահիտ Սարգսյանը հրապարակեց հարցման արդյունքները, հայտնելով, որ այն նոպատակ ուներ պարզելու տնտեսական քաղաքականության գիտական ուղղվածությունը, արդյո՞ք այն իրական բարեփոխումների ծրագիր է եւ համապատասխանո՞ւմ է ազատական տուկայի զարգացման մոդելին, ինչպես վերջին տարիներին նշվում է մեր իշխանությունների կողմից: Քննարկումը չափազանց բուռն էր եւ հետաքրքրական: Այդ մասին հաջորդ համարում:

Ա. Ղ.

ՊՐԱՇԱ

«Հույս». Լույս տեսավ չեխահայերի առաջին պարբերաթերթը

Չեխ-հայկական ընկերության եւ «Արարատ ինտերնեշնլ» ընկերության համատեղ ջանքերով այս տարվա մայիսի 28-ին Պրահայում լույս տեսավ հայերեն առաջին պարբերաթերթը՝ «Հույսը», որի գլխավոր խմբագիրն է Վ. Շահինյանը: Խմբագրական խորհրդում են նաեւ «Ազատությունն» ռադիոկայանի հայերեն աշխատակիցներ Հր. Թամրազյանն ու Ա. Դուլյանը: Թերթի խմբագրականում ասվում էր, որ Չեխական հանրապետության ներքին գործերի նախարարությունում պաշտօնապես գրանցվում է Չեխ-հայկական ընկերությունը, որը երկրի տարածքում հայ համայնքի շահեր պաշտպան միակ պաշտօնական հասատությունն է: Թերթը օգնություն եւ աջակցություն է հայցում բոլոր չեխահայերից: Նշելով, որ «Հույսի» հրատարակումը կօգնի հայ համայնքի միասնականությանը: Պարբերաթերթը այժի է ընկնում տպագրական բարձր որակով. ունի 6 էջ, լույս է տեսել 1000 օրինակ տպաքանակով:

Պարբերաթերթը մեծ տեղ է հատկացրել հայաստանյան մամուլից արտատպումներին, իսկ չեխահայ համայնքին նվիրված հոդվածում անդրադարձ կատարել գաղթօջախի խնդիրներին: «Լիբանանից, Իրանից, Թուրքիայից եւ սփյուռքի այլ գաղթօջախներից ու Հայաստանից եկածների միջեւ անջրպետը վերացնելու, նրանց համախումբ, միաձույլ դարձնելու խնդրում ընկերությունը վիթխարի անելիքներ ունի», նշվում է հոդվածում: Կարեւոր է նաեւ, որ թերթը կօգնի շնորհանալ մայրենի լեզուն: Շնորհավորում ենք եւ ազգօգուտ գործունեություն մաղթում «Հույսին»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հասցեագրության 9 տող
Պիտանիք եւ հասցեագիր
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Գաբեւյանի 47
Թելեր 562941, AT&T (37423) 151065,
e-mail INTERNET: azg2@armenia.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴՈԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutsian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՀՀՀ դաշտոնաթերթ «Հայրի» գլխավոր խմբագիր Արծրուն Պետրոսյանը թերթի հունիսի 14-ի համարում լույս ընծայած «ՀՀՀ-նախագահ սերտ համագործակցությունն անհանգստացնում է ոմանց» վերնագրով իր հոդվածում տեղում է, որ ժամանակին, 1991 թվին, Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության կողմից Լևոն Տեր-Պետրոսյանին հանձնարարության նախագահի թեկնածու առաջադրելը քաղաքական շրջանակների կողմից դիմավորվել է քննադատությամբ...

Հոդվածը գրված է ի դատապարտանք «Լրագիր օր» և «Ազգ» օրաթերթերում մեկ օր առաջ՝ հունիսի 13-ին տրված 2 տարբեր հոդվածների «ՀՀՀ-ն ընդդեմ նախագահի՞»-ի («Լրագիր օր», Զավեն Մելիքյան) և «ՀՀՀ-ն անհարմար վիճակի մեջ դրեց իր դաշնակիցներին» («Ազգ», Ռաֆիկ Հովհաննիսյան):

Պատասխանելով Ռ. Հովհաննիսյանի հոդվածին, որն Պետրոսյանը ջանում է առարկել, թե ոչ ՀՀՀ-ն «Հանրապետություն» համախմբման իր դաշնակիցների հետ աներբաղկաս չի վարվել, իր 8-րդ հանդագումարում նրանց անհարմար վիճակի մեջ չի դրել միանձնյա առաջադրելով Լևոն Տեր-Պետրոսյանին նախագահական թեկնածու, մանավանդ որ նրանք, ՀՀՀ-ի դաշնակիցները, անգամ ներկա են գտնվել այդ հանդագումարին: Նա բացատրում է, թե ՀՀՀ-ն իր դաշնակից կազմակերպությունների հետ ընդասնելը գտնվում է խորհրդարանական համագործակցության դարաշրջանի պարտավորությունների տակ և, ինչպես նրանք, այնպես էլ ՀՀՀ-ն, «խորհրդարանի դատից դուրս» «լիովին ազատ են» իրենց որոշումներ կայացնելու, մանավանդ որ «մեկի որոշումը դարաշրջիր չէ մյուսի համար», ընդհուպ «ՀՀ նախագահի թեկնածուի առաջադրման կամ դաշտանության գործում»:

Ես չեմ փորձի առարկել «Հայրի» գլխավոր խմբագրին: Ի վերջո նրա իրավունքն է ու դարակացությունը դաշտպանել իր կուսակցությանը և հանգստացնել վերջինս դաշնակիցներին: Սակայն, անկեղծորեն ցանկանալի, որ այս դարագայում ոչ թե ինքը, այլ նրանք խոսեին ՀՀՀ-ի հետ իրենց «ազատ» և «անկախության» հարաբերությունների մասին: Դա՝ կլիներ ավելի տպավորիչ: Ինչպե՞ս:

Այնուամենայնիվ ստիպված եմ «Հայրի» հարգելի խմբագրին զարմանքս հայտնել հետևյալ մտքերի համար, որ ստորև նույնությամբ մեջ եմ բերում իր հոդվածից.

«Այլապես ինչի՞ էր նման, երբ 5 տարի առաջ ռամկավարներն իրենց ոգեն ու կշիռը գերագնահատելով, բոլորի գլխի վրայից թռչելով, բոլորից ետ հանդես եկան Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածության առաջադրմամբ՝ հարուցելով քաղաքական շրջանակների քննադատությունը: Հետո նույն ռամկավարները երկար ժամանակ տարտղնեցին առաջինն առաջադրած լինելու փաստը, սակայն ոչնչով չստացան «իրենց» նախագահին վերջինս համար դժվարին դահլիճում»:

Միջազգային քաղաքական կյանքում ես չգիտեմ որևէ նման դեպք, երբ ընտրություններում արհամարհվի որևիցե քաղաքական կազմակերպության, ինչքան էլ այն փոքր լինի կամ տար, թեկուզ կամ բերած ձայների թեկուզ չնչին տոկոսը: Խոսքն անշուշտ վերաբերում է ժողովրդավարական երկրներին, որտեղ մի քանի հազար, երբեմն էլ մի քանի հարյուր և նույնիսկ մի քանի ձայնի տարբերությամբ կարող են դաշտանավոր, սենատոր, վարչապետ կամ նախագահ ընտրվել: Քաղաքական կյանքում ընտրություններ հենց այն դեպքն են, որ հաշվի են առնվում բոլորի ձայները, բոլոր ձայները: Անշուշտ ժողովրդավարական հասարակարգեր:

Երկրորդ անհերքելի է «Հայաստանի ռամկավարներ» իրենց ոգեն ու կշիռը գերագնահատելով» արտահայտությունը: Միգուցե, զուտ քաղաքական տեսակետից (և ոչ ժողովրդավարությունն), ռամկավարները գերագնահատած լինեին իրենց «ոգեն ու կշիռը», եթե նրանց թեկնածուն, այս դարագայում Լ. Տեր-Պետրոսյանը, ձայների 83,027 տոկոսով ընտրված չլիներ: Սակայն, երբ նրանց թեկնածուն հաղթել է, անկախ այն բանից, թե 83,027 տոկոսի ո՞ր տոկոսն է կազմել ռամկավարների առանձնացված ձայնը, աղա նրանք էլ են հաղթել: Այսքան դարգ, նույնիսկ տիվայլ:

Երրորդ ըստ հերթության հոդվածագրի վրա մեծ տպավորություն է թողել 5 տարի առաջ ռամկավարների այդ նախաձեռնությունը, այլապես նրան չէր թվա, որ նրանք «բոլորի գլխի վրայից թռչելով, բոլորից ետ հանդես եկան Լևոն Տեր-Պետրոսյանի առաջադրմամբ»: Մինչդեռ Հայաստանի ռամկավարները իրենց թեկնածուի առաջադրմամբ հանդես են եկել 3-դը՝ մասավորապես հանդիսանալ են Հայաստանի հանրապետության նախագահ: Սակայն, ինչպես ասվեց, նրանց թեկնածուն հաղթել է, անկախ այն բանից, թե 83,027 տոկոսի ո՞ր տոկոսն է կազմել ռամկավարների առանձնացված ձայնը, աղա նրանք էլ են հաղթել: Այսքան դարգ, նույնիսկ տիվայլ:

Երրորդ ըստ հերթության հոդվածագրի վրա մեծ տպավորություն է թողել 5 տարի առաջ ռամկավարների այդ նախաձեռնությունը, այլապես նրան չէր թվա, որ նրանք «բոլորի գլխի վրայից թռչելով, բոլորից ետ հանդես եկան Լևոն Տեր-Պետրոսյանի առաջադրմամբ»: Մինչդեռ Հայաստանի ռամկավարները իրենց թեկնածուի առաջադրմամբ

ԱՆԿՐԱՎԱՐՀ

Քմծիծաղ՝ 5 տարի հետո

հանդես են եկել 3-դը՝ մասավորապես հանդիսանալ են Հայաստանի հանրապետության նախագահ: Սակայն, ինչպես ասվեց, նրանց թեկնածուն հաղթել է, անկախ այն բանից, թե 83,027 տոկոսի ո՞ր տոկոսն է կազմել ռամկավարների առանձնացված ձայնը, աղա նրանք էլ են հաղթել: Այսքան դարգ, նույնիսկ տիվայլ:

Երրորդ ըստ հերթության հոդվածագրի վրա մեծ տպավորություն է թողել 5 տարի առաջ ռամկավարների այդ նախաձեռնությունը, այլապես նրան չէր թվա, որ նրանք «բոլորի գլխի վրայից թռչելով, բոլորից ետ հանդես եկան Լևոն Տեր-Պետրոսյանի առաջադրմամբ»: Մինչդեռ Հայաստանի ռամկավարները իրենց թեկնածուի առաջադրմամբ 13-ին տրված 2 տարբեր հոդվածների «ՀՀՀ-ն ընդդեմ նախագահի՞»-ի («Լրագիր օր», Զավեն Մելիքյան) և «ՀՀՀ-ն անհարմար վիճակի մեջ դրեց իր դաշնակիցներին» («Ազգ», Ռաֆիկ Հովհաննիսյան):

Պատասխանելով Ռ. Հովհաննիսյանի հոդվածին, որն Պետրոսյանը ջանում է առարկել, թե ոչ ՀՀՀ-ն «Հանրապետություն» համախմբման իր դաշնակիցների հետ աներբաղկաս չի վարվել, իր 8-րդ հանդագումարում նրանց անհարմար վիճակի մեջ չի դրել միանձնյա առաջադրելով Լևոն Տեր-Պետրոսյանին նախագահական թեկնածու, մանավանդ որ նրանք, ՀՀՀ-ի դաշնակիցները, անգամ ներկա են գտնվել այդ հանդագումարին: Նա բացատրում է, թե ՀՀՀ-ն իր դաշնակից կազմակերպությունների հետ ընդասնելը գտնվում է խորհրդարանական համագործակցության դարաշրջանի պարտավորությունների տակ և, ինչպես նրանք, այնպես էլ ՀՀՀ-ն, «խորհրդարանի դատից դուրս» «լիովին ազատ են» իրենց որոշումներ կայացնելու, մանավանդ որ «մեկի որոշումը դարաշրջիր չէ մյուսի համար», ընդհուպ «ՀՀ նախագահի թեկնածուի առաջադրման կամ դաշտանության գործում»:

Ես չեմ փորձի առարկել «Հայրի» գլխավոր խմբագրին: Ի վերջո նրա իրավունքն է ու դարակացությունը դաշտպանել իր կուսակցությանը և հանգստացնել վերջինս դաշնակիցներին: Սակայն, անկեղծորեն ցանկանալի, որ այս դարագայում ոչ թե ինքը, այլ նրանք խոսեին ՀՀՀ-ի հետ իրենց «ազատ» և «անկախության» հարաբերությունների մասին: Դա՝ կլիներ ավելի տպավորիչ: Ինչպե՞ս:

Այնուամենայնիվ ստիպված եմ «Հայրի» հարգելի խմբագրին զարմանքս հայտնել հետևյալ մտքերի համար, որ ստորև նույնությամբ մեջ եմ բերում իր հոդվածից.

«Այլապես ինչի՞ էր նման, երբ 5 տարի առաջ ռամկավարներն իրենց ոգեն ու կշիռը գերագնահատելով, բոլորի գլխի վրայից թռչելով, բոլորից ետ հանդես եկան Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածության առաջադրմամբ՝ հարուցելով քաղաքական շրջանակների քննադատությունը: Հետո նույն ռամկավարները երկար ժամանակ տարտղնեցին առաջինն առաջադրած լինելու փաստը, սակայն ոչնչով չստացան «իրենց» նախագահին վերջինս համար դժվարին դահլիճում»:

Միջազգային քաղաքական կյանքում ես չգիտեմ որևէ նման դեպք, երբ ընտրություններում արհամարհվի որևիցե քաղաքական կազմակերպության, ինչքան էլ այն փոքր լինի կամ տար, թեկուզ կամ բերած ձայների թեկուզ չնչին տոկոսը: Խոսքն անշուշտ վերաբերում է ժողովրդավարական երկրներին, որտեղ մի քանի հազար, երբեմն էլ մի քանի հարյուր և նույնիսկ մի քանի ձայնի տարբերությամբ կարող են դաշտանավոր, սենատոր, վարչապետ կամ նախագահ ընտրվել: Քաղաքական կյանքում ընտրություններ հենց այն դեպքն են, որ հաշվի են առնվում բոլորի ձայները, բոլոր ձայները: Անշուշտ ժողովրդավարական հասարակարգեր:

Երկրորդ անհերքելի է «Հայաստանի ռամկավարներ» իրենց ոգեն ու կշիռը գերագնահատելով» արտահայտությունը: Միգուցե, զուտ քաղաքական տեսակետից (և ոչ ժողովրդավարությունն), ռամկավարները գերագնահատած լինեին իրենց «ոգեն ու կշիռը», եթե նրանց թեկնածուն, այս դարագայում Լ. Տեր-Պետրոսյանը, ձայների 83,027 տոկոսով ընտրված չլիներ: Սակայն, երբ նրանց թեկնածուն հաղթել է, անկախ այն բանից, թե 83,027 տոկոսի ո՞ր տոկոսն է կազմել ռամկավարների առանձնացված ձայնը, աղա նրանք էլ են հաղթել: Այսքան դարգ, նույնիսկ տիվայլ:

Երրորդ ըստ հերթության հոդվածագրի վրա մեծ տպավորություն է թողել 5 տարի առաջ ռամկավարների այդ նախաձեռնությունը, այլապես նրան չէր թվա, որ նրանք «բոլորի գլխի վրայից թռչելով, բոլորից ետ հանդես եկան Լևոն Տեր-Պետրոսյանի առաջադրմամբ»: Մինչդեռ Հայաստանի ռամկավարները իրենց թեկնածուի առաջադրմամբ

Գագիկ Կարապետյան կամ «տխուր Հայաստան»

Ամբասանջյաններին համախմբողը եղել են ազգային վեհ գաղափարները

Գ. Կարապետյանը մարտական ընկերների երգանում հայտնի է «Սուզվուզ Գագո» անունով, սակայն ամբասանջյաններից մեկի կարծիքով, «տխուր Հայաստան» անվանումը նրան ավելի բնորոշ է: Ընկերների համակրանքը շահել է իր խիստ ազգային նկարագրով, «Արաբ» ֆոկտի անդամ է: Դասարանում նա իր ցուցմունքները գեղարվեստ սկսել «Արաբոյի» անցած մարտական ուղին նկարագրելով: Նախադեպ հայտնեց, որ «մինչև արտի խորքը վիրավորված է իշխանություններից՝ իրենց ազգանվեր գործունեությունն անտեսելու համար»: Գ. Կարապետյանը կարեւորեց Հայաստանի ու Արցախի վտանգվող երգաններում՝ Մարտունաշեն-Գեղաշեն, Շահումյան, Ստեփանակերտ, Մարտակերտ, Լաչին, Հուսի, Ոսկեհատ եւ այլ վայրերում իրենց մասնակցությունը մարտական գործողություններին նկարագրելը, որպեսզի «ժողովուրդը հասկանա, որ դավադրությունը մեր դեմ է եղել եւ ոչ թե մենք եմք դավադրությունը կազմակերպել»: Նկարագրեց «Արաբոյի» գործունեությունը Գեղաշենում ու Մարտունաշենում կիրառվող «կոլցո» օդերեւութաբանության դեմ, որի ժամանակ կոնտրացիայի դեմ, որպեսզի ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը իմանա, որ տարիներ առաջ «կոլցո» օդերեւութաբանությամբ ներկայացվում էր Թաքուլ Կրոնյանի, իրենց ու մյուս զոհված տղաների շնորհիվ, որոնցից կարողացան ռուս գեներալի ձեռքից խլել օդերեւութաբանության փաստաթուղթը: Այս եւ այլ մարտական գործողությունների մասին խոսելուց հետո ավելացրեց. «Ո՞ւր էին այն ժամանակ ազգի պաշտպանները, որոնք այսօր դարձել են ազգասեր, իսկ մենք դավաճան»:

Նախագահողը Գ. Կարապետյանին զգուշացրեց, որպեսզի ասածները վերաբերվեն ինչպես եւ դասարանը կարողանա դրանք գործածել իրեն անհանգստացնող հանգամանքի, հատկապես դարձյալ մարդիկներից գրությունները ներկայացնեն:

Այնուհետեւ Գ. Կարապետյանն անցավ իրեն առաջադրված մեղադրանքին, որի կապակցությամբ հայտնեց, թե մարտական գործողությունների ավարտից հետո շարունակել է հանդիպել մարտական ընկերներից Կարապետ Ղազարյանին: Վերջինս մի առիթով հայտնել է, թե իրեն ցանկանում է տեսնել Ստեփանը: Նրան հանդիպել է Ազատության հրապարակում, որ Ս. Ավետիսյանը խոսել է ազգափրկիչ ծրագրերից, հանդիպել բացատրություններ տվել իր գլուխ լազերային զենքի ստեղծման մասին: Իսկ Ս. Խալաթարյանն իրեն զգուշացրել է՝ Ստեփանը մեծ մարդ է եւ նրան պետք է լավ նայել: Գ. Կարապետյանի ասելով, Ս. Ավետիսյանն իրենց տրից էր խոսում եւ ասյանն իրենց տրից էր խոսում եւ ասյանն հարցնելու սկսել են ֆինանսական միջոցների փնտրումը, որպեսզի իրականություն դառնա ամենակարող զենքը: Ս. Ավետիսյանն իրեն ու դաշնակցական ներկայացած վարդան Մանուկյանին գործուղել է Մոսկվա՝ ինչ որ Ցուրայից գումար բերելու համար: Վերադարձել են ձեռնունայն, այնուհետեւ Ս. Խալաթարյանը 5000 դոլլարով վճարել է իր տունը՝ գործնական օգնելու նպատակով: Իր ֆերման էր պատրաստվում վաճառել հարավցի Դավիթը եւ այլն: Բայցեւայնպես, գումար հայթայթելու համար հիշել են նաեւ Դաշնակցությունը, որը «պատրաստ էր օգնելու բոլոր ազգանվեր տղաներին»:

Ամբասանջյանն ավելացրեց, որ Ս. Ավետիսյանը նրանց հայտնել է 10000-անոց բանակ ունենալու մասին, որոնք պատրաստ էին նվիրաբերվելու «սուրբ գործին՝ Արեւմտյան Հայաստանի ազատագրմանը»: Նրա ծրագրով պետք է միանային բոլորին եւ պատրիոտական շարժում ծավալեին, մինչեւ իրականություն կդառնար լազերային զենքը: Այդ ամենն այնքան իրական է թվացել, որ երկու տարի հետո իրենց Վանա լճում լողալուց են պատկերացրել:

Սակայն, դրան կհասնեն, եթե «Գագիկի նման 50 լավ տղա լինի», ասել է Ս. Ավետիսյանը:

Գ. Կարապետյանն իր ցուցմունքները կշարունակի հաջորդ նիստում: Երեկվա նիստում ներկայացվեց նաեւ ամբասանջյան Արթուր Ղազարյանի միջնորդությունը՝ փաստաթուղթ ունենալու մասին, որը մերժվեց դատական կոլեգիայի որոշմամբ: Պաշտպանական կողմն առարկեց որոշման դեմ, պնդելով, թե դատարանը պետք է նկատի ունենար գոնե այն հանգամանքը, որ ամբասանջյանին չորս ծանր մահապատիժ նախատեսող հոդվածներ է ներկայացրել, որի դեպքում պաշտպան ունենալը դատարանի է: Կոլեգիան որոշումը բողոքարկեց անփոփոխ, ամբասանջյանի՝ «ահաբեկիչ» դատավարությունը կրկին բողոքելով նրան: Ս. Ղ.

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Աբրահամ վարդապետ Մկրտչյան. «Ժողովուրդը պիտի զգա, որ եկեղեցին իրենն է...»

Հայաստանեաց Առաքելական սուրբ եկեղեցու Սյունյաց թեմի հոգեւոր առաջնորդ, հոգեւոր Աբրահամ վարդապետ Մկրտչյանի հետ մեր թղթակցի ստորեւ հրապարակվող հարցազրույցը կայացել է վերջերս, Վայոց Ձորի մարզ կատարած ուղեւորության ժամանակ, որի մասին դատմող նյութերն արդեն ծանոթ են թերթի նախորդ համարներից:

- Հայր սուրբ, ասիր է, եւ ես կուզենայի իմ եւ «Ազգի» ընթերցողների անունից Ձեզ շնորհավորել այդքան երիտասարդ տարիքում այդքան բարձր հոգեւոր դարաշրջանություն ստանձնելու համար: Երկու խոսք Ձեր մասին:

- Ինչպես գիտեք, թեմերի նոր բաժանում եղավ, 8 թեմ առաջացավ, սակայն Սյունիքը նորից մնաց ամբողջական իր կազմի մեջ՝ Վայոց Ձոր եւ Սյունիք երկու մարզերով: Ինքս տեղացի եմ, եղեգնաձորի Ռինդ գյուղից, սիրում եմ իմ երկիրը, իմ ժողովրդին, այստեղի դատմական եկեղեցիները, նոր կառուցվողները, որոնց համար ձգտում եմ անել կարելին: Թեմական կառույցները ստեղծվում են, հոգեւորականաց դասը արդեն կազմավորված է: Այսօրվա վիճակով թեմում 14 գործող եկեղեցի եւ վանք կա, մոտ ժամանակներս դրանց թիվը կրկնապատկվի, եթե ոչ ավելին: Հարկ է նկատել, որ անելիք շատ կա, դժկասություններ էլ շատ կան, եւ դրանք կապված են առկա ծրագրերի հետ: Որքան շատ ծրագրեր եմք կազմում, այնքան դժկասությունը շատանում է...

- Ինչպե՞ս է կատարվում ժողովրդի հոգեւոր դարձը:

- Դա կապված է ոչ թե ժողովրդի հետ, այլ թեմի նորակազմ վիճակի: Դեռեւս չեմք կարողանում հասնել Սյունիքի բոլոր անկյունները: Հիմնականում այս երկուսուկես տարին է, որ այստեղ ափխատանքներ են ընթանում, եւ արդեն շատ-շատ զգալի է ժողովրդի կողը եկեղեցու հետ: Եկեղեցին ինչքան կարող է՝ օգնում է ժողովրդին, եւ նա էլ փոխադարձում է: Հավատի հարցում Սյունիքը միշտ էլ դատմականորեն այդդես է եղել՝ հավատն ու գործը միշտ զուգորդվել են, եւ ըստ էության այդդես լինելը, այդդես մնալը միշտ է: Ոչ որդեւոր հոգեւորական եմ ասում, բայց որեւէ սյունեցի, որքան էլ անհավատ լինի, չի կարող թույլ տալ եւ երբեք չի հանդուրժի, եթե Տաթեւը սրբադրվի, նորավանքը կամ որեւէ այլ եկեղեցի սրբադրվի: Մեր ափխատանքում շատ մտահոգում Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզային իշխանությունների հետ: Ե՛վ գեներալ Աբրահամյանը, ե՛ւ դրն. Մանուկյանը ցանկացած դժվարության, ցանկացած խնդրի լուծման գործում եկեղեցու կողմին են, օգնում-օժանդակում են իրենց բոլոր հնարավորություններով: Երկուսներ ձգտում եմք, որ եկեղեցին դառնա ժողովրդինը: Եվ դրանք ասեմ, որ գործող եկեղեցիներում հաճախելիությունը բավական բարձր է, կապված հավատի դարձ դրսեւորումների հետ: Դրանում արտահայտվում է մարդու սերը, հարգանքը՝ դեպի եկեղեցին, ե՛ւ գեներով եկող սերը Աստծո նկատմամբ:

- Իմ զրուցակիցներից շատերը նշում էին, որ դուք շինարար առաջնորդ եք:

- Գորիսում արդեն ավարտել ենք փոքր եկեղեցու վերանորոգումը, որտեղ արարողություններն են կատարվում, շուտով կավարտվի երկրորդ մեծ եկեղեցին, որի ծախսերի մեծ մասը հոգացել է Գորիսի բնակչությունը: Այսօր հանգանակություններով եկեղեցի կառուցելը, կարծում եմ, իմինին շատ բան է նշանակում: Մեկ ամսից ավելի է, սկսվել է Հայաստանի մեծ գյուղերից մեկի՝ Սալիքայի եկեղեցու շինարարությունը, տեղացի Ադամյանների անմիջական հովանավորությամբ, ամսավերջին կսկսվի Նորավանքի եկեղեցու նորոգությունները այնպես, ինչպես որ ցանկություն է, այսինքն բոլոր խնդակները վերականգնելով: Ընթացքի մեջ է Տաթեւի գանգակատան կառուցումը, իսկ հիմնական եկեղեցու վերականգնումն արդեն ավարտված է: Ավարտել ենք նաեւ Գորիսի Վերիշեն գյուղի եկեղեցին, Սիսիանի եկեղեցու սեղանի շինարարությունը, Վայքում ավարտվել է Մարտիրոս գյուղի եկեղեցու վերանորոգումը եւ այնտեղ մի նոր, իսկապես շինարարություն է սկսվել, որ առագային կարող է վերածվել կրթական կենտրոնի: Ծրագրավորում ենք եւ հույս ունենք միջոցներ հայթայթել արդեն այս տարի եկեղեցիների շինարարություն սկսելու Մեղրիում, Ղափանում, Ջերմուկում...

- Հոգեւոր ծառայության համար ժամանակ մնո՞ւմ է:

- Հոգեւոր ծառայության իմաստով առաջին հերթին պիտի նշենք կիրակնօրյա դպրոցների գործունեությունը, քարոզչությունները, Սիսիանի եւ այլ տեղերի ուսանողներով պարբերաբար տվող հանդիպումները... Գիտե՞ք, չի կարելի միայն գնալ եւ ժողովրդին ասել, թե Աստված կա, այս ասել պիտի անել, այնպես ասել պիտի աղոթել եւ այլն, եւ այլն: Ժողովուրդը հավատի է գալիս նաեւ այն դեպքում, երբ զգում է, որ եկեղեցին, հոգեւորականն իր կողքին է իր նեղ օրերին: Այդ դեպքում հոգեւորականի հանդեպ հարգանքը վեր է ածվում հարգանքի եկեղեցու նկատմամբ եւ դա բերում-հասցնում է հավատի: Ճիշտ չի լինի, եթե հավատը միանգամից պարտադրվի եւ մարդիկ մեկ տարվա մեջ հավատացյալներ դառնան: Սխալ է այդ [illegible]: Ժողովուրդը պիտի զգա, որ եկեղեցին իրենն է, որ այն՝ ինչ եկեղեցին անում է՝ ժողովրդի համար է անում, եւ այն, ինչ ժողովուրդն է անում եկեղեցու համար՝ նորից իր համար է անում: Պետք ձգտել, որ մարդը հասկանա՝ եկեղեցին, Աստծո տունը լինելով, նաեւ իր տունն է: Ու հասկանա նաեւ, որ քարը քարի վրա դնել Հայաստանում՝ նշանակում է օգնել պետությունն ստեղծելուն, օգնել ժողովրդին եւ կերտել սեփական տունը:

Զարգացրույցը վարեց ՌՈԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Իրանի երկրաշարժերը թուլացրել են Ձորաշենի օջախային գոտու լարվածությունը

Վերջին երգանում երկրի ընդերքի ակտիվացման երեւույթները մնում են մասնագետների սեւեռուն ուշադրության կենտրոնում: Ինչպես տեղեկացրեց սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հյուսիսային բաժանմունքի տնօրեն, երկրաֆիզիկական գիտությունների դոկտոր Սերգեյ Նազարեթյանը, սեյսմաբանական եւ արբանյակային գեոդեզիայի տվյալներով նկատված է, որ Հայաստանի հյուսիսային մասի երկրակեղեւում կա կուտակված որոշակի տեկտոնական լարում: Այդ լարման մի մասը դուրս է եկել Սպիտակի 88 բալանոցի երկրաշարժի օջախային գոտու հյուսիս-արեւմտյան մասում, Շիրակի մարզի Ձորաշեն գյուղի մոտ մայիսի 29-ին մինչեւ այդմ տեղի ունեցած մոտ 120 թույլ եւ հանմնմատարար ուժեղ երկրաշարժերի միջոցով, որոնցից ամենաուժեղը, ինչպես հայտնվել է, տեղի ունեցավ հունիսի 9-ին մոտ 19-19-ին: Ըստ պարոն Նազարեթյանի, լարը հիմա էլ կան ոլորելու, որ օրերս Իրանի Մակու քաղաքի մոտ տեղի ունեցած երկու ուժեղ երկրաշարժերն ու բազմաթիվ թույլ զնցումներ նաեւ որոշակիորեն թուլացրել են Ձորաշենի օջախային գոտու լարվածային վիճակը: Հայաստանը, ինչպես եւ Իրանի այդ հատվածը, մնում է կոպկասի երկրաղինամիկական երգանի մեջ, ուստի փոխադարձ կապված են:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԽՍՈՒԹԻՐՔԵՐ

ԿՐԹԱՏՈՒՍՆԵՐ

Գիտությունը լուրջ ըուժման կարիք է զգում

Արտասահմանյան հաղորդագրություններից տեղեկանում ենք, որ այն չնայած աղքատ է բնական հարստությամբ, սակայն հարուստ է գիտական ինտելեկտուալ ունակությամբ, որը եւ կարող է բարձրացնել նրա ժողովրդի կարողությունը:

Վերջին տարիներին մեր հանրապետությունում տեղի են ունենում այնպիսի երեւույթներ, որոնք հիմք են տալիս մտածելու, թե կառավարությունը մտադիր է կործանել գիտությունը Հայաստանում:

Չնայած այն հանգամանքին, որ հանրապետությունում վաղուց ի վեր գոյություն ունեն Գիտությունների ակադեմիա, բարձրագույն կրթության ու գիտության, գյուղատնտեսության, առողջապահության եւ այլ նախարարությունների գիտական ղեկավարության վարչություններ, բաժիններ կամ այլ ղեկավար հիմնարկներ, որոնք ի պաշտոնե ստեղծված են ղեկավարելու իրենց իրավասության տակ գտնվող գիտական հիմնարկների աշխատանքը եւ հաստատելու ինստիտուտների կողմից ներկայացվող գիտահետազոտական թեմատիկ պլանները, ֆինանսավորելու եւ ստուգելու նրանց կատարման ընթացքը, չգիտես ինչ հաշվի առնելով այդ աշխատանքների կատարումը վերցրեց էկոնոմիկայի նախարարությունը, որը դրա համար յուներ համապատասխան գիտական, նեղ մասնագիտական կադրեր եւ սկսեց «բուժել գիտությունը»:

Նրանք կարծում էին, թե յուրաքանչյուր գրագետ անձ կարող է «բժիշկ» լինել եւ կատարել վիրաբուժական հատումներ: Դրա համար նրանք իրենց ձեռքը վերցրին ոչ թե նուրբ գործիքներ ու սարքեր, այլ սովորական ուրագ ու սղոց եւ սկսեցին տաշել գիտական հիմնարկների հիմքերն ու արմատները:

Առաջին տարիներին նրանք զգուշաբար պակասեցրին ֆինանսավորումը, կրճատեցին առանձին թեմաներ եւ սկսեցին պայմանագրեր կնքել գիտական հիմնարկների հետ այս կամ այն թեմայի կատարման վերաբերյալ: Թե ինչպես են կատարվում այդ թեմաները, նրանց չէր հետաքրքրում, կարեւորն այն է, որ նրանք հաստատվում են իրենց կողմից:

Բողոքները հասան վերադաս օրգաններ, մեղքը իրենցից հեռու պահելու համար ստեղծվեցին հատուկ մասնագիտական հանձնաժողովներ, որոնց վրա դրվեց թեմաների գնահատման աշխատանքը: Ստացվեց յափազանց զարմանալի երեւույթ՝ կրճատվեցին գիտական հիմնարկների ներկայացրած թեմաների մեծ մասը, շատ ինստիտուտների համար հաստատվեցին մեկ կամ երկու թեմա, շատ դեպքերում ոչ պրոֆիլային (ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի համար հաստատվեց մեկ թեմա, որը ինստիտուտի պրոֆիլի հետ համարյա կապ չունի): Գրեթե լրիվ հանվեցին էկոլոգիական թեմաները: Հանրապետությունը, որի անտառները բարբարոսաբար հատվեցին եւ կարիք են զգում լուրջ վերականգնման աշխատանքների, զրկվեց գիտական հետազոտական թեմաներից: Համարյա լրիվ վերացան հողի էրոզիայի հետ կապված, կենդանական եւ բուսական աշխարհների խախտված հարաբերությունների ուսումնասիրման հետազոտությունների, կենսաքիմիայի, կենսաֆիզիկայի, միկրոկենսաբանության, ինչպես նաեւ Սեւանի հիդրոկենսաբանության հետ կապված շատ թեմաներ (եղած տեղեկությունների համաձայն, այդ հարցի վերանայման ժամանակ հաստատվեցին շատ թեմաներ, սակայն զգալիորեն կրճատվեց գիտաշխատողների քանակը՝ թողնելով նախկին թվի 50-60 տոկոսը):

Հանդգնած եմ, որ ստեղծված էքսցեսներ հանձնաժողովներում հնարավոր չէ գտնել մի գիտնական (իսկ հանձնաժողովներում ներգրավված էին շատ անվանի գիտնականներ), որը չկարող է համաձայնվել ունենալու այնպիսի գիտական հիմնարկ, որն ունի բազմաթիվ լաբորատորիաներ, սակայն կարող է գոյություն ունենալ մեկ կամ երկու թեմայով (կամ թեմա, որը նախկինում կատարում էր 10-15 գիտաշխատող, այժմ՝ 3-5): Ստացվում է, որ էկոնոմիկայի նախարարությունը իր նոյաբակին հասավ հանձնաժողովներում ներգրավված գիտնականների օգնությամբ:

Ինչ է անհրաժեշտ ստեղծված դրությունից դուրս գալու համար: Դրա համար անհրաժեշտ է պարզել վերադաս օրգանների նոյաբակը: Եթե նրանց անհրաժեշտ է կրճատել գիտական հիմնարկների կամ նրանց աշխատակիցների թիվը, ապա դրա համար սղոցը եւ ուրագը լավ միջոցներ չեն: Անհրաժեշտ է ճշգրիտ որոշել հանրապետության ֆինանսական հնարավորությունները եւ դրա հիման վրա առաջարկել գիտական հիմնարկների վերադաս օրգաններին կազմելու ու կառավարությանը ներկայացնելու միջոցառումների սիստեմ եւ առաջարկություններ: Անհրաժեշտ դեպքում ոչ թե փոքրացնել ինստիտուտները, խայտել նրանց հիմքերը, այլ մտածել ինստիտուտների խոշորացման (միավորման), առանձին հիմնարկների, լաբորատորիաների կամ բաժինների վերացման եւ այլ ուղղությամբ: Շատերին է հայտնի, որ գոյություն ունեն նույնատիպ մի քանի հիմնարկներ, որոնց առկայությունը ներկա պայմաններում շռայլություն է:

Նման դեպքերում գիտական աշխատակիցները, որոնք կարող են ընկնել կրճատման տակ, ըստ օրենքի պետք է զգուշացվեն երկու ամիս առաջ եւ ստանան համապատասխան գումարներ:

Նմանատիպ աշխատանքները անհրաժեշտ է կատարել հանգիստ, լուրջ ինստիտուտներով եւ բազմակողմանի հետազոտություններով: Գիտական հիմնարկները կարելի է փլուզել մեկ օրում, իսկ նրա ստեղծման համար տարիներ են հարկավոր: Այդ աշխատանքները չպետք է խանգարեն գիտական հիմնարկների աշխատանքներին, չպետք է նյարդայնացնեն աշխատողներին:

Եթե վերադաս օրգանների նոյաբակը գիտական աշխատանքի կամ ծախսված միջոցների օգտաբերության բարձրացումն է, արա ինստիտուտներ ստեղծված դրությունը, հազիվ կարելի է եզրակացնել որ դա այդպես է: Բոլորին հայտնի է, որ գիտական թեմաների կատարումը համարյա բոլոր հիմնարկներում պետք է սկսել տարվա սկզբից: Սակայն ըստ վերջին տարիների կարգի՝ թեմաները հաստատվում են մայիս-հունիս ամիսներին, մինչ այդ գիտաշխատողները նստած են լինում ճամբուկների վրա եւ չգիտեն՝ հաստատվելո՞ւ է իրենց թեման, թե՞ ազատվելու են աշխատանքից:

Եթե մեր եզրակացությունը անիմն է եւ վերադաս ղեկավար օրգանները ձգտում են բարձրացնել հանրապետության գիտական հիմնարկների մակարդակը, ապա դրա համար՝ անհրաժեշտ եմ համարում հայտնել հետեւյալ կարծիքը.

Էկոնոմիկայի նախարարությունն ունի շատ ավելի կարեւոր աշխատանք, քան այն, ինչ կատարում է այժմ՝ հաստատելով գիտական հիմնարկների կազմած թեմատիկ պլանները: (Այդ աշխատանքը միշտ էլ կատարել են գիտական հիմնարկների անմիջական ղեկավար հիմնարկները): Էկոնոմիկայի նախարարությունը լավ կլինի զբաղվի պետական, կարեւոր նշանակություն ունեցող գիտական թեմատիկ պլանի կազմման, թեմաների կատարման համար բարձր մակարդակի լաբորատորիաների կամ կատարողների ընտրության (մրցույթի կարգով), նրանց հետ պայմանագրեր կնքելու եւ բարձր կարգով ֆինանսներ տրամադրելու գործով: Հանրապետական, մարզային եւ երջանային նշանակություն ունեցող բեմաները պետք է կազմեն գիտական հիմնարկները եւ հաստատման ներկայացվեն անմիջական վերադաս հիմնարկին: Վերջինս այդ գործին կարող է ներգրավել համապատասխան շահագրգիռ հիմնարկներին, ինչպես նաեւ նեղ մասնագետներին: Շատ լավ կլինի, եթե գիտական հիմնարկների թեմաներ առաջարկեն ու ֆինանսավորեն նաեւ մարզերի ղեկավարները ու առանձին խոշոր տնտեսությունները:

Գիտության այսօրվա վիճակը պահանջում է լուրջ ուշադրություն: Անհրաժեշտ է լայն քննարկման դնել այդ հարցը: Ստեղծել հատուկ մասնագիտական հանձնաժողովներ կազմելու միջոցառումների համակարգ, դրությունից դուրս գալու համար: Հանրապետությանը անհրաժեշտ է ունենալ բարձր արժանիքներով օժտված գիտական հիմնարկներ, որոնք ընդունակ լինեն վճռելու ոչ միայն հանրապետության առջեւ ծառացած խնդիրները, այլ նաեւ ստեղծելու այնպիսի նորարարություններ, որոնք արժանի լինեն այլ երկրների մասնագետների ուշադրությանը եւ դրամական միջոցներ բերեն հանրապետությանը:

Անհրաժեշտ է հասնել այն բանին, որ մեր գիտնականները ավելի բարձր տրամադրությամբ նայեն իրենց հիմնարկներին, անգիջում նվիրվեն իրենց մասնագիտությանը, եւ մտածեն ոչ թե այլ երկրներ գնալու, այլ այնտեղ գնացածներին վերադարձնելու մասին:

Հանրապետությունն ունի լայն հնարավորություններ բուժելու մեր գիտությունը, այն դարձնելու ավելի ճկուն եւ ունակ՝ բարձրորակ թեմաներ կատարելու համար: Գիտության վրա ծախսված յուրաքանչյուր դրամը պետք է հատուցվի մի քանի, եթե ոչ տասնյակ անգամ:

Ըստ եղած տեղեկությունների, հանրապետությունը գտնվում է ֆինանսական ծանր դժվարությունների մեջ: Դա զարմանալի չէ, քանի որ լավ հաշվի չի առնվում ֆինանսական հնարավորությունները, Հայաստանը մտել է միջազգային համարյա բոլոր կազմակերպությունների մեջ (իսկ դրանց համար նույնպես վճարումներ է կատարվում), որտեղ մեծ ու հարուստ պետությունների հետ, բազմամարդ պատվիրակություններ է գործուղում աշխարհի համարյա բոլոր պետություններ, մասնակցում միջազգային տարբեր կազմակերպությունների աշխատանքներին, ընդունում մեծ քանակությամբ պետական հանձնախմբեր, կազմակերպում ընդունելություններ եւ այլն: Դրանց հետ, մեծ ծախսեր է կատարում պետական հզոր եւ զգալիորեն մեծ աղարատը պահելու համար: Հայաստանից համեմատաբար մեծ պետություններից շատերն ունեն ավելի փոքր օրենսդիր օրգան եւ նախագահական խորհուրդ, քան Հայաստանը: Շատ ավելի փոքրաթիվ նախարարական ու գերատեսչական աղարատներ, քան Հայաստանը:

Ասածը լավ է ասված, «ոսքերդ վերմակիդ չափով մեկնիր»:

Ավարտելով միտքս, ցանկանում եմ կրկնել, Հայաստանին բարձր մակարդակի գիտություն անհրաժեշտ է: Նրա բուլացումը թանկ կնստի հանրապետության անվան եւ ժողովրդական տնտեսության մակարդակի վրա: Անհրաժեշտ է չափազանց զգուշությամբ եւ բազմակողմանի վերլուծությունների հիման վրա կատարել վերափոխումներ այդ բնագավառում:

Ս. ՄԻՐՋԱԲԵՅՈՎ,
Միջազգային
ինֆորմատիզացիայի
ակադեմիայի ակադեմիկոս,
կենսաբան. գիտութ. դոկտոր,
պրոֆեսոր

ԹՆՃՈՒԿ

Անվերջանալի դատավարությո՞ւն

Հունիսի 25-ին Մաշտոցի երջանի դատարանում կսկսվի մի գործի քննությունը, որն արդեն 17 ամիս չի ստանում իր վերջնական լուծումը: Մեղադրվող Վարդգես Աբգարյանի գործը մի դատարանից մյուսին է փոխանցվում, բայց ոչ մի դատավոր այդ ընթացքում այդպես էլ չի կարողացել դատավճիռ կայացնել: Իսկ ո՞րն է գործի էությունը: Ընթերցողների եւ ՀՀ գլխավոր դատախազի ուշադրությանն ենք ներկայացնում Վարդգես Աբգարյանի պաշտպան Համլետ Ավետիսյանի մեկնաբանությունը:

1994 թ. դեկտեմբերի 28-ին ՆԳՆ ՆՁ վարչությունը անազանգ է ստացել ներքին գործերի գնդապետ գիշեր դայան Արմեն Մանուկյանի սահմանադիր դիրքերում գտնվելու մասին: Հաջորդ օրը գնդապետ օպերխումբը Արթուր Պետրոսյանի գլխավորությամբ մեկնել է դեպքի վայր եւ նշված վայրում ծառայություն կատարող 6 զինվորներից վերցված բացատրություններով պարզել է, որ Մանուկյանից որոշ հեռավորությամբ միաժամանակ ծառայություն է կատարել գնդապետ մյուս զինծառայող Վարդգես Աբգարյանը, որը Մանուկյանի խնդրանքով մոտակա պահակակետից ծխախոտ է տարել եւ հանձնել նրան, անցնելով իր տեղը. 15-20 րոպե անց ավտոմատ կրակահերթի ձայն է լսել նրա կողմից: Նա մտել է եւ տեսել է, որ ընկերը մահացած ընկած է գետնին: Կարծելով, թե Արմենը ինքնասպան է եղել, այդպես էլ հայտնել է հերթափոխի մյուս զինծառայողներին:

Այնուհետեւ մի քանի օր անց դեղի վայր են մեկնել ներքին գործերի վարչության հատուկ բաժնի աշխատակիցները եւ առանց որեւէ հանձնարարության, զուգաբերել են ինքնագործունեություն եւ ծեծի ենթարկելով Աբգարյանին նույն օրը երկու բացատրության են կորզել նրանից, թե իբր ծխախոտը ընկերոջ հանձնելուց հետո, գիշերվա ժամը 24-ի սահմաններում բենզոմ դիրքերից ինչ հեռու որոշել է նրա հետ կապակցվել եւ նրա գենքը վերցրել ու դաստիարակչական անգգույշ կրակոցով սպանել է նրան: Անհապաղ բեռակոմ գործ հարուցելու, դեղի վայրը զննելու, իրերն առգրավելու, հայտաբերելու, գենքի կրակված լինելու հանգամանքը պարզելու փոխարեն միայն 12 օր անց-նշված նյութերը հանձնվել են զինվորական դատախազությանը, իսկ քննիչ Ռուսակյանը արտագրելով բռնությամբ վերցրած բացատրությունը, Աբգարյանին կալանավորել եւ մեղադրանք է առաջադրել այն էլ ոչ թե անգգույշ սպանություն կատարելու (հակասելով իր որոշման բովանդակությանը), այլ դիտավորյալ սպանության համար (ՀՀ օրենսգիրք հոդված 100):

Ու թեեւ նախաքննության ընթացքում Աբգարյանը հրաժարվել է իր «խոստովանական ցուցմունքից», որ սպանություն չի կատարել, բայց եւ այնպես, բազմաթիվ առաջադրանքների բացակայության պայմաններում, քննիչը գործի նախաքննությունը համարել է ավարտված եւ ՀՀ զինվորական դատախազությունը կեղծիքներով եւ դատավարական նորմերի բազմաթիվ խախտումներով լցված նշված գործը հանձնել է խորհրդային երջանի ժողովրդական դատարանին: 9 վկաներով բեռակոմ գործի դատաքննությունը 5 ամիս տեւելուց հետո նախկին դատավոր Շահրյանը թեմի քննություն անցկացնելու դատաքննությամբ այն վերադարձրել է լրացուցիչ նախաքննության: Բայց թողնելով գործի վճռաբեկության կարգով բողոքարկված ժամկետը, դատավարությանը մասնակցող դատախազ Մ. Թորոսյանը նշված որոշման դեմ բողոքարկել է հսկողական կարգով: ՀՀ Գերագույն դատարանն առանց խորամուխ լինելու հարցի էության մեջ, այն բեկանել է հանձնել նոր դատաքննության:

Գործի ճակատագիրը այս անգամ հանձնվել է մյուս դատավորին՝ Դարաղեջյանին: Սա էլ մեկ ամիս նույն վիճակներին քննելով, հանձնել է նորոդ դատավորին՝ Օլգա Հովհաննիսյանին, որը 1,5 ամիս հետո նշանակել է առաջին նիստը եւ մեկ ամիս էլ դատաքննություն անցկացնելուց հետո՝ նախաքննությունը թերի լինելու նույն դատաքննությամբ, կրկին գործը վերադարձրել է լրացուցիչ քննության:

Ուշագրավ է, որ հակասելով իր հակողական բողոքի բովանդակությանը, նույնի մասին միջնորդել է նաեւ Մ. Թորոսյանը: Այսինքն այն, որ բազմիցս միջնորդել էր դատաքննական կողմը եւ անհիմն դատաքննություններով մերժվել էր: Գործի լրացուցիչ քննությամբ զբաղվել է մեկ այլ քննիչ, որը առանց որեւէ ապացույց ձեռք բերելու, կրկին հանձնել է Գերագույն դատարանին:

Դատավոր Հովհաննիսյանը, տեսնելով, որ իր որոշման դատաքննությունը չի կատարվել, գործը հանձնել է ՀՀ Գերագույն դատարանին, որն էլ այս անգամ այն ուղարկել է Մաշտոցի երջանի դատարան, չորրորդ դատավորին:

Փաստորեն, 17 ամիս շարունակ Վարդգես Աբգարյանը առանց որեւէ հիմնավոր ապացույցի գտնվում է կալանքի տակ՝ կրելով թե քրեական եւ թե բարոյական զրկանքներ: Գործի անհիմն ձգձգումներն արդյունք են դատաքննչական դատախազական մարմինների անփութության, անտարբերության մարդու ճակատագրի նկատմամբ, միաժամանակ լույս տալով նաեւ կողմերի անհարգալանքի, դատախազական հսկողության բացակայության:

Խմբագրության կողմից. Հուսով ենք, որ ՀՀ գլխավոր դատախազը իր վերջո անհրաժեշտ հսկողության կիրականացնի կալանված Վարդգես Աբգարյանի գործին անհապաղ, օբյեկտիվ եւ ճիշտ լուծում տալու համար:

@rminco
Global Telecommunications

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ

ԱՐՄԻՆԿՈ ԱՅՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

✔ էլեկտրոնային փոստ (E-mail)
✔ INTERNET հարուստ տվյալների բազայի մուտք
✔ Օրերային ինֆորմացիա ամբողջ աշխարհից Ձեր կոմպյուտերի էկրանի վրա
✔ Հնարավորություն Ձեր մասին տեղեկացնելու ամբողջ աշխարհին

Մեր հասցեն.
Երեւան, Իսահակյան 28, 3 հարկ
✆ 52-63-26, FAX: 28-50-82
E-mail: support@arminco.com

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Գեներալ Լեբեդ. Յանկացած խռովություն կճնշվի ամենադաժան ձևով

Ռուսաստանը ապրում է «ձեծ խուսումների» ժամանակներ: Հասարակական մթնոլորտին գրավչություն են հաղորդել վերջին շրջանի իրադարձությունները: Իսկ այդ իրադարձությունները սկսվեցին գեներալ Լեբեդի նշանակումով: Նիժնի Նովգորոդի նահանգապետ Նեմցովը իր անբարոյ հիացմունքն արտահայտեց այդ կազմակերպությամբ. «Նշանակվել է հրադադարային հեղինակություն վայելող լիդեր, որին հնչեց չէ հանել»: Կարևորելով նրա առաջիկա աննկիմեն, նկատեց, որ ակնկալվում է իսկական գոռնմուրս առարատային ինտրիգների «վարդենների» հետ:

Լեբեդի հաղթական երևակայության նկատմամբ կասկածի կամ դարգաղեռ չարախնդության ելևէջներ նկատվեցին Զյուգանովի խոսքերում. «Լեբեդին տրամում է Ռուցկոյի ճակատագիրը»: Շարքային-ընտրողներից շատերը ողջունեցին Ելցին-Լեբեդ զույգի հայտնվելը հաղթական բեմում. «Լեբեդը բոլ սուխաչ. իր խուսումներ գործի վերածելու դասնի առիթ է ստացել», «Նրանից զաս ուրիշ ոչ մեկը չի կարող իրականացնել բսնակի բարեփոխումը, դայմարը կոռուցիայի. կազմակերպված հանցագործության դեմ» և այլն:

Ո՞վ է այդ գեներալը. ի՞նչ հաղթական ուղի է անցել, ինչո՞ւ է Ելցինը նրա հետ մեծ հույսեր կապում:

Մերձդնեստրյան հակամարտությունում տիրաբաշխված 14-դ բանակի նախկին հրամանատարն իր հաղթական գործունեությունը փաստորեն սկսեց դասգամավորական մենակարկից: Պետդումայի նորընծա դասգամավորը 1996 թ. հունվարի 17-ին տված հարցազրույցում հետևյալ կերդ է գնահատել հաղթական կլանքի իր առաջին քայլերը. «Շարքայորս եմ նայում, փարձում գլուխ հանել այս ամենից: Շատ բան անհասկանալի է. սակայն չեմ շտապում: Դեռ կհասցնեմ հասկանալ»: Անբոնազբոսիկ, էիտակ խոսակցություն, որն, ի դեպ, այնքան հմայում է գավառական ընտրողին:

Ցանկանում է «կարմիրներին» «սպիտակով» գունազարդել, իսկ «սպիտակներին» «կարմրով»:

Սոխարական փոխաբերությո՞ն է, թե՞ քաղաքական դավանանք: Կարծում եմ, եւ մեկը, եւ մյուսը: Նրա լեզվամտքը հարուստ է փոխաբերություններով: Իր եւ Ելցինի մասին ասել է. «Նա մոմիկ է, ես էլ մոմիկ եմ», կամ Գրաչովի մասին. «Ոչ տղամարդ եւ ոչ էլ կին որոնիկ չեմ սիրում»: Ունի ժիտական վերաբերմունք կյանքի գեկուսականացման, «կոմունիստ»-«դեմոկրատ» խնդրի նկատմամբ: Դա նրա, ինչպես ասում են գեներալի դավանանքն է:

Արդեն ասացինք, որ ճակատագրին հաճո էր, որ Ելցին-Լեբեդ դաշինքը նշանավորվի արտաքուստ անսպասելի իրադարձություններով: Հունիսի 19-ին Լեբեդը հայտարարեց, որ նախապատրաստվում է հեղաբեջան, նոր «ԳԿՉՊ»: Իր խոսքերից հետո դեղերը զարգացան դեպքերի ժամի դասական սխեմայով: Հունիսի 19-ին, ժ. 17-ին Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը ձերբակալեց Չուբայսի օգնական Եվսաֆյեին եւ «բնտրատու» նախագծի ղեկավար Լիսովսկուն: Տասնմեկժամյա լարված հարցաքննությունից հետո նրանք ազատ արձակվեցին կառավարական շենքից մեծ գոհար (արտաքինանգան արժույթով) զուրս հանելու համար համապատասխան թույլտվությունը ներկայացնելուց հետո: Թվում էր, թե ոչ մի արտառոց բան տեղի չի ունեցել, ընդամենը «տեխնիկական բացթողում» Ելցինի խոսքերով: Սակայն իրականում, դա խարսիկ հնարք էր հեղաբեջման հեղինակների կողմից նորատակով: Այդ հաստատելու համար Եվսաֆյեի առաջին խոսքերը. «Ինձ հարցաքննողներից մեկն ասաց, որ ամեն դեղերում նախապահիր հարցերս է, բայց ոչ նրան նոր միազածների օգնությամբ»: Հունիսի 20-ի առավոտյան 4:30-ին գենն արդեն այն միտքը հայտնեց, որ «... արդեն օդում ճախում էր դավադրության միտքը» եւ, որ «ցանկացած խռովության ամենադաժան ձեռով կճնշվի»: Ի վերջո, հայտարարեց դեպքերի դասական սխեմայով: Հունիսի 19-ին, ժ. 17-ին Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը ձերբակալեց Չուբայսի օգնական Եվսաֆյեին եւ «բնտրատու» նախագծի ղեկավար Լիսովսկուն: Տասնմեկժամյա լարված հարցաքննությունից հետո նրանք ազատ արձակվեցին կառավարական շենքից մեծ գոհար (արտաքինանգան արժույթով) զուրս հանելու համար համապատասխան թույլտվությունը ներկայացնելուց հետո: Թվում էր, թե ոչ մի արտառոց բան տեղի չի ունեցել, ընդամենը «տեխնիկական բացթողում» Ելցինի խոսքերով: Սակայն իրականում, դա խարսիկ հնարք էր հեղաբեջման հեղինակների կողմից նորատակով: Այդ հաստատելու համար Եվսաֆյեի առաջին խոսքերը. «Ինձ հարցաքննողներից մեկն ասաց, որ ամեն դեղերում նախապահիր հարցերս է, բայց ոչ նրան նոր միազածների օգնությամբ»: Հունիսի 20-ի առավոտյան 4:30-ին գենն արդեն այն միտքը հայտնեց, որ «... արդեն օդում ճախում էր դավադրության միտքը» եւ, որ «ցանկացած խռովության ամենադաժան ձեռով կճնշվի»: Ի վերջո, հայտարարեց հեղաբեջման սցենարի հեղինակների անունները: Դրանք էին առաջին փոխվարչապետ Մոսկովեցը, Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը: Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը. գեներալ Կորժակովը: Նախագահ Ելցինի դավադրության ծառայության դեմ:

Ուժային կառուցվածքներ հանող այդ անձինք, ըստ մեղադրանքի, ձգտում էին ձախողել ընտրությունների հետաձգման սցենարի հեղինակների անունները: Դրանք էին առաջին փոխվարչապետ Մոսկովեցը, Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը. գեներալ Կորժակովը: Նախագահ Ելցինի դավադրության դեմ:

Ուժային կառուցվածքներ հանող այդ անձինք, ըստ մեղադրանքի, ձգտում էին ձախողել ընտրությունների հետաձգման սցենարի հեղինակների անունները: Դրանք էին առաջին փոխվարչապետ Մոսկովեցը, Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը: Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը. գեներալ Կորժակովը: Նախագահ Ելցինի դավադրության դեմ:

Ուժային կառուցվածքներ հանող այդ անձինք, ըստ մեղադրանքի, ձգտում էին ձախողել ընտրությունների հետաձգման սցենարի հեղինակների անունները: Դրանք էին առաջին փոխվարչապետ Մոսկովեցը, Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը: Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավարությունը. գեներալ Կորժակովը: Նախագահ Ելցինի դավադրության դեմ:

ԱՇԽԱՐՀ

Քլինթոնի ընտրաղայքարի հաշվում 18 միլիոն դոլար մնաց

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 21 ՀՈՒՆԻՍ, ՓՍՍՏ. Դաշնակցային ընտրական հանձնաժողովը հաղորդել է, թե հունիսի 1-ի տվյալներով, 18 միլիոն դոլար է մնացել նախագահ Բիլ Քլինթոնի ընտրաղայքարի հաշվին եւ ավելացրել, թե մայիս ամսվա ընթացքում Քլինթոնի ընտրաղայքարի համար ծախսվել է 1,3 միլիոն դոլար: Ակնկալվում է, որ առաջիկա մի քանի ամիսներին Քլինթոնը կակտիվացնի հեռուստատեսային ծանուցումների միջոցով ընտրաղայքարը, որովհետեւ 18 միլիոն դոլարը պետք է մինչեւ օգոստոս գործածվի: Օգոստոսի վերջին յուրաքանչյուր թեկնածու մոտ 60 միլիոն դոլար պիտի ստանա նախագահական ընտրաղայքար մղելու համար:

IRA-ն ստանձնեց Մանչեստրի պայթեցման պատասխանատվությունը

ԲԵԼՖԱՍՏ, 20 ՀՈՒՆԻՍ, WSJ. «Իռլանդիայի հանրապետական բանակ» (IRA) գաղտնի կազմակերպությունը ստանձնեց պատասխանատվություն շաբաթ օրը անգլիական Մանչեստր քաղաքում կատարված պայթեցման համար, որի ընթացքում վիրավորվել էր ավելի քան 200 մարդ: Այս կողմից, Բելֆաստում անվտանգության արտակարգ միջոցառումների պայմաններում վերսկսվեց Հյուսիսային Իռլանդիայում խաղաղության բանակցությունը, որը համարվում է ճակատագրական:

Իսրայելը փորձում է ետ պահել արաբ ղեկավարներին հակաիսրայելական որոշումներ կայացնելուց

ՅԵԼ ԱՎԻՎ, 21 ՀՈՒՆԻՍ, ՍՊՈՏՆԻՔՍ. Իսրայելը փորձում է արաբ ղեկավարներին ետ պահել շաբաթ օրը Կահիրեում բացվող արաբական գերագույն ճանաչողական ժողովի հանձնարարությամբ Բենիամին Նաթանյահուն ուղերձ է հղել Հոսնի Մուբարակին՝ հավատիացնելով, թե պատրաստ է վերսկսել արաբ հարեւանների հետ հաշտության երկխոսությունը առանց նախնական պայմանների: Բայց, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, Նաթանյահուն օրերս հայտարարել էր, թե Սիրիայի հետ հաշտությունը պետք է հիմնվի Գոլանի բարձունքների նկատմամբ Իսրայելի վերահսկողության պահպանման վրա, պաղեստինցիներին կտրամադրվի սուղ սահմանափակ վարչական ինքնավարություն, Երուսաղեմի բաժանման մասին խոսք անգամ լինել չի կարող, իսկ վերահսկվող տարածքներում պետք է շարունակվի բնակավայրերի շինարարությունը:

Գերմանիայում հրդեհվել են թուրքական գործակալություններ

ԲԵՌԼԻՆ, ՀՈՒՆԻՍ, 20 ԱՏ-AFP. Բեռլինի ոստիկանությունը յոթեթթի օրը հայտնել է, որ թուրքական երեք տուրիստական գործակալություններում նախորդ գիշեր հրդեհներ են տեղի ունեցել, որոնք բոցավառվող հեղուկով շշերի պայթյունի հետեւանք են եղել: Քննիչները գործակալություններից մեկում գտել են մի ծեռագիր երկտող, հավանաբար թուրքական կոմունիստական կուսակցության կողմից: Այն պարունակում է գերմաներեն հետեւյալ բառերը. «Կեցցեն մեր հացադուլավոր մարտիկները»: Սակայն ոստիկանությունը չի բացառում դրա կապը արգելված Քրդստանի աշխատավորական կուսակցության հետ: Անցյալ տարի թուրքական գրասենյակների վրա տեղի ունեցած հարձակումների ալիքի համար մեծ մասամբ մեղադրվել էին նրա զինյալները:

ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ

Դաշնակիցներին լրտեսելիս անգլիացիները չափն անցան

Անգլիայի կառավարության ներկայացուցիչները դեռեւս չեն խոսել Ֆրանսիայում անգլիական MI-6 հետախուզության գործողությունների մասին: Մինչդեռ հետախուզության մի աղբյուրից «Սանդի թայմզ» թերթի ստացած տեղեկությունների համաձայն, նրա գործընկերները կարող են ստանալ շանսեր եւ նոր պատրաստներ: Չէ՞ որ նրանք կարողացել են տեղեկություններ ստանալ Ֆրանսիայի ինժեներների մշակած սուզանավերի հայտնաբերման նոր տեխնոլոգիայի վերաբերյալ:

Այդ նպատակով բրիտանացիները մի կլոռիկ գումար են ծախսել: Նախնապես MI-6-ը ստեղծված եղավ կեղծ ընկերություն ստեղծել Բրեստում գտնվող ռազմածովային հենակետից ոչ հեռու: Ընկերությունն իբր զբաղվում էր պատերազմական տեխնոլոգիայի բնագավառի խորհրդատվությամբ եւ հրատարակչական բիզնեսով: Այդ հարկ եղավ լայն վճարել հենակետում աշխատող մի մասնագետի:

Արտասահմանում լուրջ գործողության ձեռնարկելուց առաջ MI-6-ը պարտավոր է ստանալ եթե ոչ արտգործնախարարի, առնվազն ՍԳՆ որեւէ բարձրաստիճան պաշտոնյայի հավանությունը: Տվյալ դեպքում, չնայած դիվանագիտական բարդությունների վտանգին, Լոնդոնն այդ բայլին դիմեց այն պատճառով, որ խաղարկվում էր հայտնվել Անգլիայի ստրատեգիա միջուկային նավատորմի ճակատագիրը, որի գոյությունը հրան թույլ է տալիս պահպանել մեծ տերության կարգավիճակը:

Միջուկային սուզանավերը ավելի ու ավելի անխոցելի են դառնում ակուստիկ սարքերի համար, որոնցով հակառակորդը փորձում է պարզել դրանց գտնվելու վայրը: Ինչպես նշում է «Սանդի թայմզը», նման սուզանավերի առավել կատարյալ նմուշը ռուսական «Ակուլա 2» սուզանավն է: «Թրայդենտ» դասի անգլիական սուզանավերը ևս համարվում են անաղմուկ: Հանկարծ Լոնդոնում իմացան, որ Ֆրանսիայի ինժեները մշակել են ծովի մակերևույթին թռչած հեռով սուզանավերի հայտնաբերման եղանակ: Այդ նպատակով տեղադրություն է անցկացվում, որ երեքյակին, ռադարի կամ լազերային ճառագայթի միջոցով:

Բրիտանիայի կառավարությունը մոռաց, որ իրեն ևս դեռ է մնում բերի այդ տեխնոլոգիան, այլապես, չնայած ՆԱՏՕ-ի գործընկերների հետ եղբայրական հարաբերություններին, այդ կազմակերպությունում Բրիտանիայի ազդեցությունը կրճատվեր: Ուստի MI-6-ին հանձնարարվեց կեղծ ֆիրմա հիմնել Ֆրանսիայում, մանավանդ որ Եվրամիության երկրներում դա կարելի է արարել անել:

Նշանակություն չէ, որ ՆԱՏՕ-ի դեսպանները լրտեսում են միմյանց: Սակայն, անգլիացի մենաշնորհների կարծիքով, Բրիտանիայի հետախուզական ծառայությունը անցել է բոլոր թույլատրելի սահմանները, և դա կարող է գայրացնել ընկերոջ Ժակ Շիրակին: Վերջինս Մեյորին խնդրել էր Ֆրանսիայի հանձնաժողովին մանանակ անգլիացիներին պատշաճորեն տալարի մի արտահանման հարցում եւ այժմ կարող է հրաժարվել գրանից:

«ԲՈՍՈՏՈՆ»

ՀԱՅԱՍՈՆ

Փարիզի քաղաքապետին դաս է սպառնում

ՓԱՐԻԶ, ՀՈՒՆԻՍ, 20 ԱՏ-AFP: Փարիզի քաղաքապետ ժան Տիբերին կարող է դասական պատասխանատվության կանչբերին կարող է դասական պատասխանատվության կանչ-վել կոռուպցիայի մեղադրանքով այն բանի համար, որ իր որդի Դոմինիկին տրամադրել է քաղաքապետարանին պատկանող բնակարան: Կոռուպցիայի գործեր քննող հատուկ դատավոր Էրիխ Հալֆենը, որը քննում է Գոլիստական միավորում հանուն հանրապետության կուսակցության ամենահանրաճանաչ ֆինանսավորումները, արդարադատության նախարար Ժակ Տուբոնին կանգնեցրել է երկընտրանքի առաջ, ասելով, որ Տիբերին պետք է հարցաքննության ենթարկվի տիերի բախման, իսկ նրա որդին՝ բնակարան ստանալու համար: Հալֆենն իր հանձնարարականներն է տվել պետական դատախազին ուղարկած զեկուցագրի մեջ: Գրասենյակը կոչ է անում, թե կոնկրետ որ գործողության համար մեղադրի Տիբերին, որը նախագահ ժակ Շիրակի (նախկինում Փարիզի քաղաքապետի) աջ թեւն էր քաղաքապետարանում, մինչեւ որ անցյալ տարի փոխարինեց Շիրակին քաղաքապետի պաշտոնում:

Հնդկաստան. Ատոմակայանները անաղմուկ վիճակում

ԲՈՍՊԵՅ, ՀՈՒՆԻՍ, 19 ԱՏ-AFP: Հնդկաստանի միջուկային կարգավորիչ մարմնի նախկին ղեկավարը երեքշաբթի օրը նախազգուշացրել է, որ երկրի ատոմակայանների մեծամասնությունը անաղմուկ վիճակում է եւ «պոտենցիալ ճառագայթման վտանգ» է ներկայացնում: «Հնդկաստանի միջուկային կարգավորման գործընթացը ամբողջապես կեղծիք է: Ես փաստաթղթերով կարող եմ ապացուցել դա», ասել է Ա. Գոպալակրիշնան, որը ատոմական էներգիայի կարգավորման խորհրդի ղեկավար էր, եւ որին շաբաթ օրը հեռացրել էին աշխատանքից: Գոպալակրիշնան, որը կալիֆոռնիայի հիմնադրամից ստացել է դոկտորի կոչում միջուկային էներգետիկայի գծով, ասել է, որ Հնդկաստանը չունի միջուկային անվտանգության հսկողությունն իրականացնող կառավարությունից անկախ «...ծակալություն:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Պարույր Սեւակը... նոմենկլատուրային աշխատող

Անհայտ փաստաթուղթ մեծ բանաստեղծի մասին

Թվում է. մեր օրերում գործնականորեն անհնար է հայտնագործել Պարույր Սեւակի նման մեծերի կյանքին ու գործունեությանը վերաբերող նոր փաստաթղթեր: Թվում է. ամեն ինչ հայտնի է. ամեն ինչ հայտնաբերված է ու հրապարակված: Սակայն ոչ-ոքվում է. որ տակավին կան մատնիներ. որոնք հայտնի չեն լայն հասարակությանը. քանի որ մինչեւ վերջերս եղել են փակի տակ. կրել «գաղտնի» կնիք: Տվյալ դեպքում խոսքը նախկին կուսակցական արխիվում պահպանված մի փաստաթղթի մասին է:

Մեծանուն բանաստեղծն ու մտավորականը եղել է... նոմենկլատուրային աշխատող, այսինքն՝ Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարի նրա գրաղեցրած պաշտոնը մտնում էր ՀԿԿ կենտկոմի ղեկավարության կողմից հաստատման ենթակա պաշտոնների ցանկի մեջ:

Եվ այսպես «Անհատական հաշվառումից հանած աշխատակցի թիվ 1795 անձնական գործ. Ղազարյան (Սեւակ) Պարույր Ռաֆայելի»: Այսօր արխիվում այն գրանցված է «ֆոնդ 1, ցուցակ 123, գործ 3482» նիշով: Գործը հաջողվեց ի հայտ բերել վերոնշված արխիվի վոխտնօրեն, պատմագիտության թեկնածու Ամատուն Վիրաբյանի աջակցությամբ, ինչի համար մեծագույն երախտագիտություն ենք նրան: Ցավոք, բոլոր աղբյուրներում բացակայում է Պ. Սեւակի ձեռագիր ինքնակենսագրությունը, բեռն այն թվարկված է գործում պարունակող փաստաթղթերի ցանկում: Կարելի է միայն ենթադրել, որ այդ մատյանը գործից հանվել է մինչեւ արխիվ մտնելը, միգուցե բանաստեղծի մահախոսականը կազմելիս, կամ էլ, ինչն ավելի հավանական է թվում, 1991 թվականին ՀԿԿ կենտկոմի ազգայնացած արխիվը կենտկոմի շենքից հատկենտ կերպով տեղափոխելիս հաղորդության ու անհերթության հետեւանքով է, որ անդառնալի կորել են ՀԿԿ կենտ-ի արխիվից Հայաստանի 2-րդ հանրապետության պատմության ամենահետաքրքիր ու բերեռ ամենատրամատիկ էջերից մի քանիսը: Այս ենթադրությունը կարելի է անել, ելնելով գործի էջերից, որոնց հաջորդականությունը խախտված չէ:

Շեռագիրը գեղեցիկ է ու ընթեռնելի. հոգեբաններն ու ձեռագրագետները կասեին՝ հիստակ, ազնիվ ու բաց մարդու ձեռագիր: Լուսանկար չկա (չի էլ եղել. սոսնձի հետքեր չեն երեւում): Թղթապանակի մեջ կնքված է Պ. Սեւակի ձեռքով ուսերեն լրացված անկետան:

Ազգանուն, անուն, հայրանուն. Ղազարյան (Սեւակ) Պարույր Ռաֆայելի: Ծննդյան ամսաթիվը. 1924, հունվարի 26: Ծննդյան վայրը. գ. Սովետաբեն, Հայկական ԽՍՀ Վեդու շրջան: Ազգություն. հայ: Սոցիալական ծագումը. գյուղացիներից: Կուսակցականությունը. անկուսակցական: Կրթությունը. բարձրագույն: Ավարտել է. 1. Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը: Ուսանելու տարիները. 1940–45: Մասնագիտությունը. բանասեր: 2. Գորկու անվան գրական ինստիտուտի գրականության բաժինը: Ուսանելու տարիները. 1951–56: Մասնագիտությունը. գրող: 3. Հայկ. ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան: Օտար ու ԽՍՀՄ ժողովուրդների տիրապետած լեզուները. անգլերեն (բառարանով), ռուսերեն՝ ազատ: Ունեցած գիտական աշխատությունները. մենագրություն Սայաթ Նովայի մասին, մի շարք գրականագիտական ու գրականագաղտնական հոդվածներ: Աշխատանքային գործունեությունը. 1945 թ. սեպտեմբերից 1946 թ. աորիլը՝ Հայկական ԽՍՀ ԼԿԵՄ կենտկոմի «Ավանգարդ» պատշաճաբերքում գյուղատնտեսական բաժնի վարիչ, քաղ. Երեւան, 1946 թ. աորիլից 1947 թ. մարտ՝ «Գրական թերթ» շաբաթաթերթի խմբագրի տեղակալ, քաղ. Երեւան: 1949 թ. աորիլից 1951 թ. հունվարը՝ Հայաստանի գրողների միության պատշաճաբերք «Գրական թերթի» որոնիչի բաժնի վարիչ, քաղ. Երեւան, 1956 թ. սեպտեմբերից 1958 թ. նոյեմբերը՝ ավագ դասախոս Մոսկվայի Ս. Գորկու անվան գրական ինստիտուտում, քաղ. Մոսկվա, 1963 թ. հունվարից՝ ավագ գիտաշխատող Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում, քաղ. Երեւան, 1966 թ. դեկտեմբերից՝ Հայկական ԽՍՀ գրողների միության քարտուղար, քաղ. Երեւան: Արտասահմանում գտնվելը. 1966 թ. հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 1-ը՝ Հունգարիա, այցելություն պատվիրակության հետ, որոնցիայի օրերին մասնակցելու համար: Ինչ կառավարական պարգեւներ ունի. «Աշխատանքային արիության համար» մեդալ: Վերաբերմունք զինվորական ծառայությանը. զինվորական կոչումը. չուսանած, պիտանի է շարային ծառայությանը, զինվոր: Ընտանեկան դրությունը. ամուսնացած. կինը՝ Մենաղարիվիլի Ն. Վ., 1927 թ. ծնված, որդի՝ Հրայր Պարույրի, 1948 թ. ծնված, որդի՝ Արմեն Պարույրի, 1958 թ. ծնված, կորյուն Պարույրի, 1964 թ. ծնված, հայրը՝ Սողոմոնյան Ռաֆայել Ղազարի, 1892 թ. ծնված, մայրը՝ Անահիտ Գաստարի, 1892 թ. ծնված: Բնակարանի հասցեն. Երեւան, Կասյան փ. 3, բն 21: Լրացված է. 16 փետրվարի 1967 թ. Անձնական ստորագրություն. Պ. Ղազարյան:

Հավելյալ տեղեկություններ էջում ՀԿԿ կենտկոմի կադրերի հաշվառման սեկտորի աշխատակիցն ավելացրել է. 1967 թ. դեկտեմբերի 17-ից ՀԽՍՀ մտքոլի կոմիտեի անդամ, հաստատված ՀԿԿ կենտկոմի բյուրոյի կողմից. ԽՍՀՄ 7-րդ գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, ընտրված 1968 թ. մարտի 17-ին:

Մյուս փաստաթուղթը, նույն ոճով գրված, թիվ Բ.48/25-ս քարտեզն է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի 1967 թ. փետրվարի 28-ի նիստի թիվ 48 արձանագրությունից:

Խիստ գաղտնի

Ընկ. Պ. Ռ. Ղազարյանի (Սեւակի) մասին

Ընկ. Պարույր Ռաֆայելի Ղազարյանին (Սեւակին) հանձնարարել Հայաստանի խորհրդային գրողների միության վարչության քարտուղար:

Կենտկոմի քարտուղար՝ Ա. Քոչինյան:

Եւ վերջին գրառումը նույն կարգադրի սեկտորի աշխատակցի ձեռքով. «Մահացել է 1971 թ. հունիսի 17-ին»...

Այսպես: Իհարկե, սենսացիոն ոչինչ չկա. ոչնչացրեց երկու փաստաթուղթ, որոնցում մեկը գրված Սեւակի ձեռքով:

Թղթապանակում կարված են նաեւ թերթերից կտրված բազմաթիվ նյութեր Պ. Սեւակի մահախոսականը. հարգանքի նյութը բանաստեղծի բարձրագույն մասին. հոդվածներ նվիրված Սեւակի 50-ամյակին: Այս ամենը կարող է զարմացնել. քանի որ թերթերի նյութերը սովորաբար չեն պահվում կենտկոմի այս կամ այն անձնական գործում: Միգուցե կարելի սեկտորի աշխատողներն այդպես իրենց մե՞ղքն են քավում մեծ բանաստեղծի մասին փաստաթղթերի սակավության պատճառով...

ՏԻԳՐԱՆ ԱՎԱՆԵՍՈՎ

ՓԱՌԱՏՈՆ

Եվ թող փյունիկը հառնի մոխիրներից

Հերթական «Գաուդեամուսն» ավարտվեց

Հերթական «Գաուդեամուսը»՝ GAUIII-ը անցավ անհարթ, բայց փայլուն: Բավական դժգույն առաջին օրվանից հետո, որի ընթացքում ոգեշունչ սիրողականությունը չկարողացավ փոխարինել պրոֆեսիոնալիզմի բացակայությանը, սկսվեց նույնքան չհավելկոված երկրորդ օրը: Դեռ երբեմն այնպես չէր եղել, որ թե ոչխարները ողջ լինեին եւ թե գայլերը՝ կուշտ: Այդ օրը ելույթ էին ունենում «Երեւան» կանանց կամերային երգչախումբը (ոչխարներ) եւ Վահան Արծրունին (գայլ): Երգչախմբի փայլուն ելույթը փաստորեն աննկատ մնաց Արծրունու հզորագույն «ծոմից» հետո: Այդ օրը նա գերեց ամենքին եւ գործով իրեն դրսեւորեց որպես իր սերնդի երկրպագուների մտային եւ երաժշտական լիդեր: Իրոք, թե բանակում, թե բեմի վրա նա վիրտուոզ է եւ հոգեբույժ (երգիչ Վահան Արծրունին մասնագիտությամբ բժիշկ է, ծառայում է բանակում- խմբ.): Նրա վերջին գործը երգ է հայրենիքի մասին, որն ունկնդիրներին օգնեց հոգեբանության զգացումով համակվել սեփական Հայրենիքի հանդեպ, նրան պիտանի լինելու անհրաժեշտությունն ունենալ: Քանզի եթե փառատոն է, ապա երաժշտությունը պետք է տոգորված լինի լավատեսական, ստեղծարար էներգիայով:

Առաջին երկու օրերին տեղի ունեցան երկու անհրաժեշտ ելույթներ՝ HIERONIMUS M. BOSCH-ի (Միխայել Բալասանյան) եւ Վահան Արծրունու:

Առավել հարթ ու հաջողված էր փառատոնի երրորդ օրը: Հիանալի հանդես եկավ EMPYRAY-ը: Ուղղակի եւ աննուղղակի իմաստներով ակուստիկ այդ երեկոյի ընթացքում նրանք առաջին անգամ երգեցին հայերեն, եւ պարզվեց, որ խմբի մենեջեր Սարգիս Մանուկյանը մայրենի լեզվի կատարյալ զգում է շատ հետաքրքիր ձեւով՝ ոռի նրբերանգներն անհամեմատ ավելի նուրբ ձեւով հաղորդելով հայերեն, քան որեւէ այլ լեզվով:

Ասել, թե «Ոսկան հայոցը» հաջող հանդես եկավ, կնշանակի ոչինչ չասել: Երկարաեւ ընդմիջումից հետո բեմի վրա հայտնվեց Հովհաննես Կուրդինյանը: Ընդմիջումն օգտակար էր եղել նրա համար: «Ոսկան հայոցի» ելույթը ընդգրկուն էր, կոկիկ եւ զգացողական: Դա բնավ անակնկալ չէր: Պարզապես անհրաժեշտ պահին հազվադեպ է հաջողվում հասնել դրան: (Ճիշտ, ինչպես սեփսի տեխնիկայում):

Վահան Արծրունին բեմ եկավ Կարինե Եզեկյանի, Գուրգեն Մելիքյանի, Լեւոն Հախվերդյանի ուղեկցությամբ: Նրանցից յուրաքանչյուրի կատարումը յուրովի լավն էր: Կարինեի պրոֆեսիոնալ երգեցողությունը, Մելիքյանի կայունությունը, Լեւոնի ճարտարությունը եւ Արծրունու ծավալայնությունն ըստ արժանվույն ավարտեցին համերգի առաջին բաժինը:

Երկրորդ բաժնում բեմի վրա հայտնվեց փառատոնի բաղձալի հյուրը՝ «Կրեմատորիյ» հրաշալի խումբը: Խմբի ստեղծագործությունների ոճը, որոնց հեղինակը մեր հայրենակից Արմեն Գրիգորյանն է, կարելի է անվանել հոգու կամ մարմնի զգացումների, պատկերների, վիճակների ակնթարթային դեգերումներ: Արմեն Գրիգորյանը հնարավորություն չի տալիս սովորական ձեւով վերծանել իր ստեղծագործությունը: Նա մատուցում է պատմություն, պատկեր, հիմնախնդիր՝ առանց բարդախոսության եւ ամփոփման, այսինքն՝ իր ունկնդրին է թողնում ընտրություն կատարելու հնարավորությունը: Արմենին հաճելի զարմանք պատճառեց այն փաստը, որ երեւանում ճանաչում եւ սիրում են «Կրեմատորիյ» խումբը: Այդ հիշարժան երեկոյի ընթացքում նրանք կատարեցին 15 գործ, 15 ակուստիկ գլուխգործոց: Այնտեղ առկա էին քուրակի (Վյաչեսլավ Բուխարով) կտրուկ ու հյութեղ անցումներ, կիթառի (Անդրեյ Մուրաշով) հնչուն եւ ճշգրիտ մենանվագ, Արմեն Գրիգորյանի հզոր ձայնը, բաս կիթառի (Սերգեյ Տրեցյակով) տեմպն ու հիմնավորությունը: Մի խոսքով, դա «Կրեմատորիյի» եւ ամբողջ փառատոնի հաղթանակն էր: Հաջորդ օրը ՆԳ մշակույթի պալատում պատիվ տվեցին նախօրեին ձեռք բերված բարձր մակարդակը: Դա հատկապես վերաբերում է EMPYRAY խմբին: Հունիսի 16-ին նա տվեց վերջին 10 ամսում իր լավագույն համերգը: Բավական լավ տպավորություն էին թողնում Արծրունու փառատոնների նորեկ STRAINGERS-ի անդամները: Նրանք կազմում են վերջին խումբը, որը փորձում է հավակնոտ արեւմտյան երաժշտություն նվագել Ուրս-ռոքի ոճով: «Ոսկան հայոցը» սկզբում տարաձայնություններ հետ կապված խնդիրներ ունեցավ, բայց հիանալի հանդես եկավ:

Անկասկած, տարվա հերոս «Կրեմատորիյ» խումբը ցնցող ելույթ ունեցավ: Ռուսաստանում այն տպավորությունը համարում են վայելեր նվագող խումբ: Փայլուն եւ հեգնական տեքստերի ուղեկցությամբ այդ երաժշտությունն ուժեղ տպավորություն է գործում, եւ զարմանալի չէ, որ մարդիկ տարեցային կերպով պարում էին ամբողջ համերգի ընթացքում:

Արմեն Գրիգորյանը գոհ էր ընդունելությունից եւ խոստացավ «Կրեմատորիյ» խումբը կրկին երեւան բերել այս տարվա աշնանը: Եվ թող փյունիկը հառնի մոխիրներից:

ԱՐԵՐԻ

ՓԱՐԻԶ

Նապոլեոնի ստորագրած Ֆոնտենբլոյի պայմանագիրը աճուրդի չի դրվել

Ֆրանսիայի Ազգային դիվանատունը վերջապես բերեցրեց տուն բերեցին: Վաճառքից ստացվեց փափագելի հաղորդագրությունը. պատմաբաններին «Ֆոնտենբլոյի պայմանագիր» անունով հայտնի փաստաթուղթը վաճառքի չի հանվի: Այն վաճառքի էր հանվելու Սոցիալիստների աճուրդում, հունիսի 5-ին, իսկ Ֆրանսիայի Ազգային դիվանատունը Սոցիալիստներից աճուրդին մասնակցելու իրավունք էր ստացել: Այստեղ երկար ժամանակ չէին կարողանում ուշի գալ, քանի որ այն միշտ հանդիպել է դիվանատան ամենաարժեքավոր փաստաթղթերից մեկը: Իսկ թե ինչպես է հայտնվել ԱՄՆ-ում, առայժմ կարելի է միայն գուշակություններ անել, քանի ոսիկանությունը դեռ չի հայտնաբերել նրա թալան անցած ճանապարհը: Ֆոնտենբլոյի պայմանագիրն ստորագրել է Նապոլեոն Բոնապարտը, 1814 թվին:

«ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՌՈՏ

Հայկական խաչքար Բելոստոկում

ՎԱՐՇԱՎԱ, 21 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ ՍԵՓՈՒԿՅԱՆ ԹՂԹՍԿԻՑ. Բելոստոկում (Լեհաստան) ուղղափառների գերեզմանատանը տեղադրվեց Լեհաստանի տարածքում առաջին խաչքար-հուշարձանը՝ նվիրված 1915 թ. հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Մեկ ու կես միլիոն նահատակների հոգեհանգստյան աղոթք կարդաց Բելոստոկ-Գդանսկ ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Սավան: Թող սուրբ խաչը համախմբի ծեզ Բելոստոկում եւ առհասարակ մեր երկրում, որտեղ ընդունվեցիք գրկաբաց, ասաց նա: Ներկա գտնվող հայերի կողմից շնորհակալական խոսք ասաց Սամվել Մովսիսյանը եւ ավելացրեց, որ վերջին տարիներին այստեղ հաստատված հայերը նոպատակադրված կազմակերպեցին այս հուշարձանի կառուցումը, որպեսզի լեհերն ավելի մոտիկից ծանոթանան հայոց պատմությանն ու մշակույթին: 90-ական թվականների սկզբին Լեհաստան է տեղափոխվել մոտ 1000 հայ, որոնցից 300-ը ապրում է Բելոստոկում: Ցանկություն կա այստեղ ստեղծել հայկական ընկերություն, որն ավելի կամրապնդի հայ-լեհական բարեկամությունը:

Ռոուլինգ Սթոունզի Ռիչարդսը պատիկ դարձավ

Ռոուլինգ Սթոունզի անառակ որդին Քեյթ Ռիչարդսը 52 տարեկանում պատիկ դարձավ: Անցյալ շաբաթ նրա որդին՝ 26-ամյա Մաթյոն Ռիչարդսը եւ 23-ամյա Լյուսի դե լա Ֆալայզեն դուստր ունեցան, որին անվանակոչել են Էլլա Ռոուզ:

«ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆ»

ԼԻԲԱՆԱՆ

Նոր գտածոներ Բաալբեկի մոտ

Լիբանանի հնամյա Բաալբեկ քաղաքի մոտակայքում շինարարական աշխատանքների ընթացքում էսկավատորի շերեփը դուրս բերեց մշակված քարե սալ: Բանվորները զանգահարեցին ոսիկանություն, որի աշխատակիցներն այդ մասին հայտնեցին հնագետներին: Գիտնականներն սկսեցին զգուշորեն հանել բնահողի վերին շերտը եւ հայտնաբերեցին Յուպիտերի լավ պահպանված արձանը: Խոր շերտերում հայտնաբերված վեց սարկոֆագների պարունակությունն էլ ավելի ուրախացրեց գիտնականներին: Առաջինի մեջ կային հին սկուահակներ, արձանիկներ, կենցաղային իրեր: Երկրորդում կար ոսկե բոնգե եւ պղնձե երեք տասնյակ զարդ, երրորդում դարձյալ սկուահակներ եւ արձանիկներ: Պեղումները դեռ չեն ավարտվել, բայց լիբանանցի հնագետները արդեն հայտարարել են, որ այդ գտածոն վերջին տասնամյակների առավել նշանակալի հայտնաբերումներից մեկն է:

«ԿՈՍՄՈՍԼՍՆՅԱ ՊՐԱՎԴԱ»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԼՈՒՍԱԲԱՆՎՈՒՄ Է
ԼՈՆԴՈՆԻ ԹՄՄ ԵՎ
«ՍԱԲԵՐԱՏՈՒՐ-ՍԵՎԱՆ»
ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԵՎՐՈՊԱ-96

Անգլիա-Իսպանիա խաղից առաջ իսպանացիները տոմսերից հրաժարվեցին

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,
ՐԱՖՖԻ ՈՒՇՈՒՆՅԱՆ

Լոնդոն

Անգլիայում հսկայական հետաքրքրությամբ են սպասում այսօր կայանալիք Անգլիա-Իսպանիա 1/4 եզրափակիչ խաղին: Իսպանացիներին 7 հազար տոմս էր հասկացվել, բայց նրանք 5 հազարից հրաժարվեցին: Այդ տոմսերը 2 ժամում անմիջապես ուղարկվեցին «Ինդեպենդենտ» բերի. վախենում են անգլիայի ֆուտբոլասերներից:

Տերի Վենեյբլսը Անգլիայի հավաքականի մարզիչը հայտարարել է, որ հնարավոր է խաղին չմասնակցեն Ալան Շիրերը, Դարեն Անդերսոնը և բիմի ավազ Տոնի Ադամսը: Դա լուրջ կորուստ կլինի անգլիացիների համար, մանավանդ Շիրերի և Ադամսի բացակայությունը: Իբր նրանք վնասվածքներ են ստացել: Սակայն բացառված չէ, որ Վենեյբլսի հայտարարությունը տակտիկական նպատակ է հետապնդում: Երեկ հեռուստատեսությամբ (BBC) հաստատ հաղորդում եղավ Անդոնի Սուպերտեսության մասին: Այսօր «Daily mirror»-ը նույնպես հաստատ անդրադարձավ Իսպանիայի հավաքականի 35-ամյա դարպասապահ և բիմի ավազ Սուպերտեսային: Անգլիայի հավաքականի հետ Սուպերտեսան իր 110-րդ խաղը կանցկացնի Իսպանիայի հավաքականում: Պարզվում է, որ Անգլիայի հավաքականի մարզիչ Տերի Վենեյբլսը փրկել է Անդոնի Սուպերտեսայի ֆուտբոլային կարիերան: 10 տարի առաջ Վենեյբլսը մարզում էր «Բարսելոնը»: Հենց նա է Սուպերտեսային 1-ին անգամ հրավիրել «Բարսելոն»: Դա մեծ ընդդիմություն է առաջացրել, բանի որ բիմի այդ ժամանակվա դարպասապահ Խավիեր Ուրսիկոչեան բուն կատալոնցի էր, և տերի ֆուտբոլասերները նրան շատ էին սիրում: Լուրջ բարդություններից հետո, այնուամենայնիվ Սուպերտեսան հաստատվեց «Բարսելոնում»: Վենեյբլսը օգնեց «Սուպիին» հաղթահարել դժվարությունները. «Դա ինձ համար շատ նշանակալի օգնեց: Ես համոզված եմ, որ հիմա էլ Վենեյբլսը գերազանց մարզիչ է: Իր արածն ինձ համար շատ մեծ է և մենք ընկերներ ենք մնում: Շատ ափսոսում, որ մենք իմ սիրած մարզչի դեմ ենք խաղալու: Բայց ի՞նչ կարող ես անել, ֆուտբոլն այդպիսին է: Անգլիական ֆուտբոլը լավն է, բայց համոզված եմ, որ մենք ենք հաղթելու և խաղից հետո Վենեյբլսի հետ մի բաժակ կխմենք: 1994 թ. աշխարհի առաջնությունում ֆուտբոլային ավանդույթները բացակայում էին, այդ տեսակետից այս առաջնությունը կարող է լինել ամենալավը:

Անգլիայի հավաքականի դարպասապահ Դեյվիդ Սիմանը, որն առայժմ շատ վստահ է խաղում, իր հերթին հայտարարեց. «Մենք վաղուց չենք հաղթել: Այս մրցաշարը մեզ համար առանցնակ է և ձեռքից բաց չպետք է թողնենք»:

«Մենք հավատում ենք մեր կարողություններին: Հոլանդիայի հավաքականի նկատմամբ 4-1 հաշվով հաղթանակը մեզ լրացուցիչ վստահություն տվեց հաջող խաղի համար: Կարծում եմ, տեսնելով մեր խաղը, մրցակիցներն արդեն կվախենան մեզանից», ասել է Ալան Շիրերը:

«Մեր առաջին 2 գոլից հետո կարող էինք 6-7 գնդակ էլ խփել Հոլանդիայի հավաքականի դարպասը: Մեր հաղթանակներից հետո ֆուտբոլասերների հետ հարաբերությունները շատ լավ են, և դա լրացուցիչ հավաս է ներշնչում, ավելացրել է Տերի Շերինգհեմը:

Անգլիա-Իսպանիա խաղն այսօր սկսվելու է անգլիական ժամանակով ժ. 15-ին: Մադրիդի կենտրոնից ուրախությամբ իմացա, որ տոմս է հատկացվել: Հարկավոր է շտապել «Ռենբլի»:

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Օլիմպիական միակ ուղեգիրը այդքան էլ հեշտ չէ վաստակել

Երևանի շախմատիստի կենտրոնական տանը ավարտին է մոտենում շախմատի Հայաստանի տղամարդկանց 56-րդ առաջնությունը: Մնացել է անցկացնել ընդամենը երկու տուր:

Անցկացված վերջին երկու տուրերից առաջ մրցաշարային աղյուսակը միանձնյա գլխավորում էր մեր տաղանդավոր գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը, սակայն 10-րդ տուրում Սերգեյ Մովսիսյանից և 11-րդ տուրում Արտաշես Մինասյանից ցավալի ոչարտություններ կրեց և զիջեց առաջատարի իր դիրքերը: Ուրախացնում է Վիգեն Միրումյանը, որը բացառիկ գեղեցիկ ոճով և մեծ վերելքով է անցկացնում առաջնության ոչարտիաները: Երեկ նա սևերով ոչ ոքի խաղաց Տիգրան Նալբանդյանի հետ և վաստակելով 7 միավոր, Արտաշես Մինասյանի հետ բաժանում է առաջին-երկրորդ տեղերը: Արտաշես Մինասյանը վերջին երկու տուրերում հաղթանակելուց հետո զգալիորեն բարելավեց մրցաշարային իր դիրքերը և հավակնում է առաջնության հաղթողի կոչմանը: Հաղթանակ տոնեց նաև Սերգեյ Մովսիսյանը, որը սևերով հաղթեց գյումրեցի Արա Մինասյանին: Այս մրցաշարում շատ անհաջող է խաղում Հայաստանի բազմակի չեմպիոն, ՀՀ հավաքականի անդամ, գրոսմայստեր Աշոտ Անաստասյանը, որի ոչարտությունները հաջորդում են միմյանց: Մնում է զարմանալ նրա ցուցադրած արդյունքների վրա: Բանն այն է, որ ՀՀ առաջնության արդյունքների հիման վրա ընտրվելու է նաև Հայաստանի հավաքականի այն 6-րդ շախմատիստը, որը կնասնակցի Համաշխարհային 32-րդ օլիմպիական խաղերին: Օլիմպիական թիմի անդամը, որն իր տեղը հավաքականում համարում է ապահովված ու իմիջիայլոց է հանդես գալիս, կարող է նույնատիպ մոտեցում ցուցաբերել նաև օլիմպիադայում: Իսկ նրանք, ովքեր տեղ չունեն հավաքականում, անհաշտ ոգով փորձում են մղում բաղձալի մեկ ուղեգրի համար: Մրցաշարը նաև լավ դրոց է մեր դպրանի շախմատիստներ Վիգեն Միրումյանի, Դարեն Սարյանի և Լևոն Արոնյանի համար, որոնց հետ այնքան էլ հետաքրքիր չէ խաղալ մեր գրոսմայստերներին:

Ա. Ա.

ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ–ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ

1 e4 c5 2 Ձf3 d6 3. d4 c:d4 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 a6 6. Փe3 e6 7. g4 h6 8. f4 Ձc6 9. h3 Ցc7 10. Ցe2 Փe7 11. Փg2 Ձ:d4 12. Փ:d4 e5 13. Փe3 ef4 14. Փ:f4 Փe6 15. 0-0-0 0-0-0 16. e5 de5 17. Ցd:e5 Ցc8 18. g5 hg5 19. Փ:g5 Ձd7 20. Ցg3 Փ:g5+ 21. Ցd:g5 f6 22. Ցh4 Նf7 23. Նhg1 Ձf8 24. Ձd5 Փf5 25. Ցf2 Նb8

26. Ձd6 Ցc7 27. Ցf5 Ցb6 28. Փd5 Ցe3+ 29. Նb1 Նe8 30. Փf7+ Փf7 31. Ցd5+ 1-0

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

ՀՀ հավաքականի մրցակիցների ճամբարում

«Բենֆիկան» փորձում է վերագտնել իր փառավոր անցյալը

ԳՐԻԳՈՐ ԱՍԻԲՅԱՆՑ

Վալանս

Ժամանակին պորտուգալական նավերը Լիսաբոնից Ինդիա սկսում իրենց նավարկությունները աշխարհի ծովերում, վերադարձին բերելով հարստություն և լարեր տարբեր երկրներից: Նավատորմի շնորհիվ անցյալում աշխարհի ամենահզոր ոլորտներից մեկը եղած Պորտուգալիան, այսօր իր 92 հազար քառ. կմ. մակերեսով և 10 մլն բնակչությամբ, փորձում է վերագտնել երբեմնի փառքը: Սակայն երկրի ներկայումս Եվրոպայում ամենաառաջ ոլորտներից մեկն է, և պորտուգալացիների մշակույթի զարգացմանը մեծապես նպաստող «Գալուստ Գյուլբենկյան» հասարակությունը Լիսաբոնում մնում է որոնել հույսի կենտրոն:

Լիսաբոնի «Բենֆիկա» թիմը, ամբողջ երկրի ոլոր, ճգնաժամ է ապրում: Թիմն այս տարի ևս չկարողացավ տիրանալ չեմպիոնի կոչմանը: Ընթացիկ մրցաշրջանում «Բենֆիկան» սենիական դաշտում 0:3 հաշվով ամոթալի պարտություն կրեց «Պորտոյից» և 0:2 հաշվով Լիսաբոնի «Սպորտինգից», իսկ «Բրավիսոյի» և «Գյումարեսի» հետ խաղաց ոչ-ոքի 1:1: Մինչդեռ «Բենֆիկայի» կազմում խաղում են «Պարի Սեն-Ժերմենից» եկած Ռիկարդոն և Վալդոն, բելգիացի դարպասապահ Հոմը: Ֆուտբոլի աշխարհի 1994 թ. առաջնության լավագույն դարպասապահը, ինչպես նաև ամբարկ Ժոաո Պինտոն հավաքականի թերևս ամենալավ ֆուտբոլիստը:

Մարզիչ Արթուր Ժորնան մրցաշրջանի արդեն 3-րդ խաղից լրել է «Բենֆիկան», դասալով բիմի ներկայիս անկման պատասխանատու փառավոր անցյալի տեր այս թիմը Պորտուգալիայում այսօր նման է ծերացած ու խամրած նախկին աստղի: Բայց ասում են, թե մեծ բիմերը երբեմն չեն մեռնում, և մի օր «Բենֆիկան» կարող է երկրին առաջատար դառնալ: Թիմի ֆուտբոլիստները ջանք չեն խնայում այդ օրը մոտեցնելու համար:

ՈՍԲԱՐԿՈՒՆԵՐ

Ալան Շիրերը գլխավորում է ռմբարկուների ցուցակը

Եվրոպայի առաջնությունում ավարտվեցին խմբային մրցաշարի հանդիպումները: Բոլոր խաղերն, առանց բացառության, անցան լարված և անհաշտ պայքարում: Առաջին տուրում գրանցված արդյունքներ դրա վառ ապացույցն են: 8 հանդիպումներից 4-ը ավարտվեցին ոչ-ոքի: Իսկ մյուսներում առանցագրվեցին նախագույն հաշվով հաղթանակներ: Մրցաշարի այդի է ընկնում նաև բարձր արդյունավետությամբ: Խմբային մրցաշարերի 24 հանդիպումներում առանցագրվել է դարպասի 55 գրավում: Դա հաջողվել է անել 43 ֆուտբոլասերների, իսկ բոլորը Պելեն գնչակն անցկացրել է սենիական դարպասը: Ռմբարկուների ցուցակը գլխավորում է դաշտի տերի հարձակվող Ալան Շիրերը, որն ի դեպ, նաև առաջնության առաջին գոլի հեղինակն է: Նրանից մեկ գնդակով ետ են մնում բոլորովին Խոշան Ստոյկովը և դանիացի Բրայան Լաուդրուպը: Ցավոք, այս երկու նշանավոր ֆուտբոլասերներ իրենց թիմերի հետ դուրս մնացին հետագա պայքարից: Խոշան Ստոյկովը, որը միշտ ֆանատակարգված է դեղի մրցակցի դարպասը, Եվրոպայի առաջնության ներկա փուլում արդեն խփել է 13 գնդակ 10-ը ընտրական խաղերում. 3-ը Անգլիայում: Խորվաթիայի հավաքականի առաջատար Դավոր Շուկերը ընտրական փուլի հանդիպումներում իր խփած 12 գնդակներին ավելացրեց ևս երկուսը: Նա հնարավորություն ունի գերազանցելու գերմանացի Գերդ Մյուլերի ռեկորդը Եվրոպայի առաջնություններում խփած գոլերի քանակով: Մյուլերի արդյունքը 16 գնդակ է: Իր հայրենակցին հնարավորություն ունի անցնել նաև Յուրգեն Կլինսմանը, որը 11 անգամ տանջություն է պատճառել մրցակցին: 9-ը նախնական փուլում, 2-ը Անգլիայում:

Լավագույն ռմբարկու Ալան Շիրեր

Առաջնության ռմբարկուները

1. Ալան Շիրեր (Անգլիա) 4
2-3. Խոշան Ստոյկով (Բուլղարիա), Բրայան Լաուդրուպ (Դանիա) 3
4-7. Դավոր Շուկեր (Խորվաթիա), Պիերլուիջի Կազիրագի (Իտալիա), Յուրգեն Կլինսման (Գերմանիա), Տերի Շերինգհեմ (Անգլիա) 2
8- Ալֆոնսո, Կամիներո, Մանխարին, Սոռոր (Իսպանիա), Գյուգարի, Ցորիանֆ, Բլան, Լոկո (Ֆրանսիա), Ա. Նիլսեն (Դանիա), Սա Պինտո, Ֆերնանդո Կուտո, Ժոաո Պինտո, Ֆիգո, Դոմինգոս (Պորտուգալիա), Ցիմբալար, Մոստովոյ, Թետրաձե, Բեսլասնիխ (Ռուսաստան), Թոտրիլմազ (Հվեյցարիա), Վլաովիչ, Բոբան (Խորվաթիա), Մյուլեր, Ցիգե, Շամմեր (Գերմանիա), Կոլֆ, Բերգկամպ, Կլյուվերս (Հոլանդիա), Շիեզա (Իտալիա), Նեդվեդ, Բերյոլ, Սուխոդոլսկի, Կուկա, Անկեր (Չեխիա), Գասկոյն (Անգլիա), Ռադուչու (Ռումինիա), Մաակոյս (Շոտլանդիա), Պենե (Ինգնագդ, Բուլղարիա), բոլորն էլ մեկ գոլ:

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքերով

ՇՐՋԱՆ

Թուրքիան Հունաստանի եւ Հայաստանի ռազմական համագործակցությունը լուրջ չի համարում

Հունաստան-Հայաստան ռազմական համաձայնության արշագանգները Թուրքիայում եւ Հունաստանում

ԳՐԻԳՈՐ ՉԱՐԲԻՅԱՆ.

Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հայտարարեց, որ Աթենքում ստորագրված ռազմաքաղաքական պայմանագրերի վերաբերյալ լուրերը ապիսանանոով է ընդունում, եւ լարվածությունը մեղմելու կոչով դիմեց Հունաստանի կառավարությանը: Հայտարարության մեջ նշվում է, որ Հունաստանը Թուրքիայի հարեւան երկրների հետ ռազմական համաձայնագրեր կնքելով ձգտում է Թուրքիայի դեմ ռազմական դաշինք ստեղծել:

Արտգործնախարար Էմրե Գյոնենսայը Անկարայում լրագրողներին ասաց, որ Հունաստանի ստորագրած ռազմական համագործակցության համաձայնագիրը «Թուրքիային վախեցնելու մի անմիտ փորձ է»: Այդպես Գյոնենսայը ավելացրեց, «Համաձայնագրի ստորագրման արարողության ընթացքում հունական կողմի նեկայացուցիչների կողմից ասվեցին հակաթուրքական մի շարք արտահայտություններ»: Միաժամանակ նա ուշադրություն դարձրեց Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Սայոնիկում արած այն հայտարարությանը, որ ոչ համաձայնագիրը որեւէ երրորդ երկրի դեմ ուղղված չէ եւ ռազմական պատրաստության բնագավառում համագործակցելու նոպատակ է հետապնդում: (Այստեղ հիշեցնենք, որ ՀՀ նախագահի հայտարարությունը հրապարակվել էր բերի երեկոյան համարում: Ե.Խ.): Վերջում Գյոնենսայը ասաց, «Այսուհետեւ, համաձայնագրի շուրջ Հունաստանի փայփայած բոլոր հույսերը ի դերեւ ելան: Ես ինչպես կարծում էի, Թուրքիային վախեցնելու Հունաստանի փորձերին Հայաստանը զորձիք չի դառնա: Հայտնի է, որ Հունաստանը 2 տարի առաջ հայտարարել էր, որ նման համաձայնագիր է կնքել նաեւ Սիրիայի հետ հանդիպման ընթացքում: Պարզվեց, որ այդպիսի համաձայնագիր ընդհանրապես չի կնքվել»:

ՍՏԱՄԲՈՒԼ, 21 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես հաղորդում է «Մարմարա» թերթը, թուրքական մամուլը գրերն միահամուռ բացասական գնահատական տվեց Հունաստանի ստորագրած ռազմական համագործակցության համաձայնագիրը «Թուրքիային վախեցնելու մի անմիտ փորձ է»: Առավել Գյոնենսայը ավելացրեց, «Համաձայնագրի ստորագրման արարողության ընթացքում հունական կողմի ներկայացուցիչների կողմից ասվեցին հակաթուրքական մի շարք արտահայտություններ»: Միաժամանակ նա ուշադրություն դարձրեց Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Սայոնիկում արած այն հայտարարությանը, որ նա համաձայնագիրը որեւէ երրորդ երկրի դեմ ուղղված չէ եւ ռազմական պատրաստության բնագավառում համագործակցելու նոպատակ է հետապնդում: Պարզվեց, որ այդպիսի համաձայնագիր ընդհանրապես չի կնքվել»:

ՍՏԱՄԲՈՒԼ, 21 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես հաղորդում է «Մարմարա» թերթը, թուրքական մամուլը գրերն միահամուռ բացասական գնահատական տվեց Հունաստանի ստորագրած ռազմական համագործակցության համաձայնագիրը «Թուրքիային վախեցնելու մի անմիտ փորձ է»: Առավել Գյոնենսայը ավելացրեց, «Համաձայնագրի ստորագրման արարողության ընթացքում հունական կողմի ներկայացուցիչների կողմից ասվեցին հակաթուրքական մի շարք արտահայտություններ»: Միաժամանակ նա ուշադրություն դարձրեց Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Սայոնիկում արած այն հայտարարությանը, որ նա համաձայնագիրը որեւէ երրորդ երկրի դեմ ուղղված չէ եւ ռազմական պատրաստության բնագավառում համագործակցելու նոպատակ է հետապնդում: Պարզվեց, որ այդպիսի համաձայնագիր ընդհանրապես չի կնքվել»:

«Գյունայդին» թերթը գրում է, որ հույն-հայկական ռազմական համաձայնագիրը զայրացրել է Անկարային:

Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Օմեր Աֆբալը հայտարարել է, թե այդ համաձայնագիրը այն լարված կացության նոր օրինակն է, որը ստեղծվում է Հունաստանի խաղախաղեստությունը: Աֆբալն ասել է, որ սպառնալիքի երեւույթները սկսվել են Հունաստանի այն գործողություններից, երբ այդ երկիրը ցանկացել է զանազան ռազմական համաձայնություններով շրջապատել Թուրքիային: «Այսպիսի միջոցառումները, որոնց թիրախը Թուրքիայի անվտանգությունն է, անհայտման կվնասեն նույն այդ ձեռնարկումների հեղինակներին», ասել է նա:

Թուրքական զանազան թերթեր ինքնաբերաբար տողեր են ուղղել ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հասցեին, ասելով, որ նա «ընկել է Հունաստանի ազդեցության տակ»: Թերթերը նշել են նաեւ, որ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը իր «բաջալերվելով Աթենքում գտած զորակցությունից, զանգատվել է Թուրքիայից»: Մասնավորապես նշվել է, որ ՀՀ նախագահը Սալոնիկում իր դասվին տրված ճաշկերույթի ընթացքում հայտարարել է, թե հայերը հանդիսացան Օսմանյան կայսրության զոհերը եւ ավելացրել, որ «Հայաստանի ստորագրման արարողության ընթացքում հունական կողմի ներկայացուցիչների կողմից ասվեցին հակաթուրքական մի շարք արտահայտություններ»: Միաժամանակ նա ուշադրություն դարձրեց Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Սայոնիկում արած այն հայտարարությանը, որ նա համաձայնագիրը որեւէ երրորդ երկրի դեմ ուղղված չէ եւ ռազմական պատրաստության բնագավառում համագործակցելու նոպատակ է հետապնդում: Պարզվեց, որ այդպիսի համաձայնագիր ընդհանրապես չի կնքվել»:

«Գյունայդին» թերթը գրում է, որ հույն-հայկական ռազմական համաձայնագիրը զայրացրել է Անկարային:

Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Օմեր Աֆբալը հայտարարել է, թե այդ համաձայնագիրը այն լարված կացության նոր օրինակն է, որը ստեղծվում է Հունաստանի խաղախաղեստությունը: Աֆբալն ասել է, որ սպառնալիքի երեւույթները սկսվել են Հունաստանի այն գործողություններից, երբ այդ երկիրը ցանկացել է զանազան ռազմական համաձայնություններով շրջապատել Թուրքիային: «Այսպիսի միջոցառումները, որոնց թիրախը Թուրքիայի անվտանգությունն է, անհայտման կվնասեն նույն այդ ձեռնարկումների հեղինակներին», ասել է նա:

Թուրքական զանազան թերթեր ինքնաբերաբար տողեր են ուղղել ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հասցեին, ասելով, որ նա «ընկել է Հունաստանի ազդեցության տակ»: Թերթերը նշել են նաեւ, որ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը իր «բաջալերվելով Աթենքում գտած զորակցությունից, զանգատվել է Թուրքիայից»: Մասնավորապես նշվել է, որ ՀՀ նախագահը Սալոնիկում իր դասվին տրված ճաշկերույթի ընթացքում հայտարարել է, թե հայերը հանդիսացան Օսմանյան կայսրության զոհերը եւ ավելացրել, որ «Հայաստանի

«Նշի յուզլ» թերթը մեջբերում է Հունաստանի մամուլի մեկնաբանությունները այդ համաձայնագրի մասին: Հունական թերթերը գրել են, որ այդ համաձայնագիրը թե ռազմական եւ թե քաղաքական տեսակետից մեծ կարեւորություն է ստանում այնուհետեւ ժամանակաշրջանում, երբ Թուրքիայի եւ Հունաստանի հարաբերությունները լարված են:

«Աբոնմաթինի» թերթը գրել է, թե «Հունաստանը Թուրքիայի թիկունքում վստահելի եւ մնայուն դաշնակից ձեռք բերեց»: Իսկ «Թա նեա» թերթը գրել է, «Հունաստանը, որը դեմ է օգնի Հայաստանի նորաստեղծ բանակին, այս համաձայնագրով դաշտանում ստանձնում է հայ սպաների եւ ենթասպաների մարզումների գործը»:

ՀԱՄԱՌՈՏ

Ռուս տիեզերագնացները տիեզերքում «լռվեցի՞ն»

21 ՀՈՒՆԻՍ, BBC. Ռուսաստանյան տիեզերական գործակալության գլխավոր տնօրեն Յուրի Կոզտեւը հայտնեց, որ ֆինանսական միջոցների դակասի դասճառով ռուսաստանյան տիեզերագնացների մնալը «Միր» ուղեծրային կայանում հարկադրաբար կերկարաձգվի: Տիեզերագնացներ Յուրի Օնուֆրիենկոն եւ Յուրի Ուսայովը օգոստոս ամսին, այսինքն սկզբնական ծրագրով նախատեսվածից 40 օր ավելի ուշ միայն կկարողանան վերադառնալ երկիր: Ուշացման դասճառն այն է, որ գործակալության կրած ֆինանսական դժվարությունների դասճառով կրճատվել է կատարվող «Սոյուզ» հրթիռների քանակը, որոնք տիեզերագնացներին հասցնում են «Միր» ուղեծրային կայանն ու ետ են վերադարձնում երկիր: Յուրի Կոզտեւի խոսքերով, տիեզերագնացները փիլիսոփայորեն են վերաբերվում հարկադրական ուշացմանը եւ համբերատար սպասում են հրթիռի կառուցման ավարտին:

«Մեսախի ճանապարհ»՝ ծրագիրը ֆինանսական խնդիրներ ունի

ԲԱԲՈՒ, 21 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ-ANS-PRESS. Եվրոդիական միությունը մտադիր է ենթել «Մեսախի ճանապարհ-2000» մարդասիրական ակցիայի իրականացման հարցը միայն 1997 թվականի սկզբին: Այդ մասին Բաքվում հայտարարեց Եվրահանձնաժողովի ներկայացուցիչ Ֆոսիաիսը: Նրա տեղեկատվության համաձայն, ծրագրի իրականացումը հետաձգվում է մասնավոր ընկերությունների կողմից ֆինանսավորման հարցերում ծագած խնդիրների առնչությամբ:

ԱՌԱՔԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Վանաձոր քաղաքի «Ավտոմատիկա» բաց բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի սեփականատերերին

«ԿՈՆՎԵՐՍ» փայատիրական բանկը բաթձր գներով գնում է «ԱՎՏՈՄԱՏԻԿԱ» ԲԲԸ բաժնետոմսերը:

ՄԻ ԿՈՐՑՐԵՔ ՁԵԶ ԸՆՁԵՌՎԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիմել՝ Երեւան, Կոմիտասի փող. 49, «Կոնվերս» փայատիրական բանկ

Հեռ. 235 301, 271 610

ԵՐՎԱՆԴ ԵՐՋՆԿՅԱՆԸ, ԿԱՐԵՆ ՋԱՆԻԲԵԿՅԱՆԸ *հրավիրում են*

ՌԵԳԹԱՅՄ

Այսինքն - երաժշտություն
Բիգ-Բենդ, Սիմֆո-ջազ
Այսինքն - շոումեն
ԱԶԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՌԵԳԹԱՅՄ

Այսինքն - հումոր եւ ծիծաղ
ՈԱՖԱՅԵԼ ՔՈԹԱՆՋՅԱՆ,
ԼԱԼԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ,
ԱՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Այսինքն - խաղեր.

ՌԵԳԹԱՅՄ

մրցույթներ եւ բար-սրճարան
Այսինքն - միակատար
հանգիստ ու բավականություն
Ամեն երեքշաբթի
Սանկտ-Պետերբուրգի թատրոնում
Ամեն երեքշաբթի ժամը 21-ին

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Սեփական տուն. 1000 քմ հարակից հողամասով, ոչոչատու ծառերով. Հասցեն՝ Սյասնիկյան պող. (Կենդանաբանական այգու հարեւանությամբ)

Գինը՝ պայմանագրային:

Հեռախոսներ՝ 27-18-75 տուն. 58-27-24 աշխ. (9.00-20.00)

ԱԿՆ

տուրիստական ֆիրման

հրավիրում է ուղեւորության կենտրոնական Եվրոպա, ուղիղ չվերթով:

1. ՊՐԱՀԱ հուլիսի 15-ից 19-ը
2. ՎԻԵՆՆԱ հուլիսի 15-ից 19-ը

Առաջարկվում են վիզաները եւ սպասարկումը:
Տեղեկությունների համար զանգահարել 53-15-00

Nestlé ընտանիքի արտադրանքի մեծածախ վաճառք

կակաո Nesquik (450gr)

NESCAFÉ Brasero (300gr)

NESCAFÉ սուրճ GOLD (95,190gr)

շոկոլադ Lion

Դիմեք «ՀԱՅԱՍՏԱՆ» առեւտրի տուն եւ Ձեր խանութում միշտ կլինի աշխարհահռչակ ֆիրմայի բարձրորակ արտադրանքը

Մեր հասցեն՝ Քոչարի 2
Հեռախոս՝ 22 77 22

Երեւանի «ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ» համալսարանը հայտարարում է 1996-97 ուսարվա ընդունելություն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՉՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ արտաքին քաղաքականություն եւ դիպլոմատիա, հասարակական հարաբերություն եւ էկոնոմիկա, թարգմանչություն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ կոմերցիա, ֆինանսներ եւ այլ վարչատնտեսական ու տրանսպորտային գործառնությունների էկոնոմիկա եւ կազմակերպում, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ, մարքեթինգ եւ գովազդ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ միջազգային հանրային իրավունք, միջազգային մասնային եւ վարչական իրավունք, միջազգային առեւտրի իրավունք:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՉՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ միջազգային ժուռնալիստիկա, հեռուստաձայնային ժուռնալիստիկա, բաշարություն, միջազգային տուրիզմ, թարգմանչություն:

ՊԱՐՍԻՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԹԱՐԳՄԱՆՉՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
(ԹԵՀՐԱՆԻ ԱԶԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Մասնագիտացումները՝ պարսից լեզու, գրականություն, թարգմանչություն:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ռոմանագերմանական եւ արեւելագիտական բաժիններ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ տնտեսական-իրավական, ոստեական-իրավական, դատական-փորձագիտական, դատա-դատախազական հնչական:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ արտադրության մենեջմենթ, մակրոէկոնոմիկա, մարքեթինգ, ֆինանսներ եւ բանկային մենեջմենթ, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ հայոց լեզու, գրականություն:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմության, աշխարհագրության եւ տուրիզմի բաժիններ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ մանկավարժություն, տարական ուսուցման մեթոդիկաներ:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ նախադպրոցական մանկավարժություն, հոգեբանություն, երաժշտություն, երաժշտություն:

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Քիմիայի, կենսաբանության եւ դեղաբանության բաժիններ

ԴԵՖԵԿՏՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ լոգոպեդիա, դեֆեկտոլոգիա, հոգեբանություն, օլիգոֆրենոմանկավարժություն, դեֆեկտոլոգիա, ուսուցիչ-դեֆեկտոլոգ:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մասնագիտացումները՝ կիրառական մաթեմատիկա եւ ինֆորմատիկա:

Միջազգային իրավունքի, միջազգային տնտեսական հարաբերությունների, միջազգային ինֆորմացիայի եւ թարգմանչության, միջազգային հարաբերությունների եւ թարգմանչության, պարսից լեզվի եւ գրականության ու թարգմանչության, օտար լեզուների, իրավագիտական եւ տնտեսագիտական ֆակուլտետներում ուսանողները կտիրապետեն երկու օտար լեզուների (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն եւ այլն):

Համալսարանի ընդունելությունը կանցկացվի մրցութային կարգով: Ուսանողները անհրաժեշտության դեպքում ուսումը կարող են հանձնեղել աշխատանքի հետ: Նրանց ուսուցումը կկազմակերպվի անհատական գրաֆիկով:

Ուսման տեւողությունը մանկավարժության եւ հոգեբանության, մանկավարժության եւ տարական ուսուցման ու դեֆեկտոլոգիայի ֆակուլտետներում չորս տարի է, մյուս ֆակուլտետներում հինգ տարի:

Համալսարանը, կնքված պայմանագրի հիման վրա, կարող է գերազանցիկ ուսանողներին եւ նոպատակային ասպիրանտներին ուղարկել սովորելու Աթենքի, Սիրակի, Մարսելի, Լիսաբոնի, Ապոնիկի, Վաճանի եւ Թեհրանի համալսարաններ, Մոսկվայի եւ Թեհրանի միջազգային հարաբերությունների ինստիտուտները:

Դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը. դիմում, միջնակարգ կրթության վկայական կամ միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմ, տեղեկանք առողջության մասին, վեց լուսանկար (3X4): Փաստաթղթերի ձեւակերպման եւ ընդունելության ենթադրություններին մասնակցելու համար դիմորդը պետք է վճարի 5000 դրամ, որը անկախ ենթադրությունների արդյունքներից, ետ չի վերադարձվում:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հուլիսի 20-ը. Ընդունելության ենթադրությունները կանցկացվեն հուլիսի 21-ից 30-ը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ՝ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ 13:
ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝ 55-24-70, 55-67-90, 55-46-80:

ՈՒԿՏՈՐԱՏ

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաքարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Գարդարանք» հասարակության տպարան. Երեւան-23, Արզումանյան 2. Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 2119. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 21.06.1996 գինը՝ 75 դրամ

digitised by A.R.A.R.@